

"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՂՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ  
ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

[www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵԶ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

ԳԵՎՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ  
ՏՄՐԱՍ



GEVORG BROUTIAN

ARMENIAN  
COSTUME

ԳԵՎՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ

# ԸՆՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱԼԲՈՍ



ԵՐԵՎԱՆ 2007

GEVORG BROUTIAN

# ARMENIAN COSTUME

ILLUSTRATED ALBUM



YEREVAN 2007

## Հրատարակվել է պետական պատվերով

**ԳԵՎՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ**  
GEVORG BROUTIAN

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶ (ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱԼԲՈՄ). Երևան: «Հայաստան» հրատարակչություն  
(«Գրական հայրենիք»), 2007թ., նկ., 140 էջ:

ARMENIAN COSTUME (ILLUSTRATED ALBUM). Yerevan, "Hayastan" publishing house  
(“Grakan hayrenik”), 2007, Il., 140 p.

ISBN 978-5-540-02055-8

© ԳԵՎՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ GEVORG BROUTIAN, 2007:

© «Գրական հայրենիք» “Grakan hayrenik”, 2007:

Մշակութասեր հասարակությանը ներկայացվող հայկական տարագների սույն ալբոմը արգասիքն է նկարիչ Գևորգ Բրուսյանի (1888-1952) կյանքի վերջին տասնամյակի տրեմազան աշխատանքի:

Գ.Բրուսյանը ծնվել է Ալեքսանդրապոլում, մեկ հարյուրամյակ առաջ Տարոնից գաղթած տոհմիկ ընտանիքում: Ավագ որդին է ականավոր երաժիշտ-բանահավաք, մանկավարժ և նկարիչ Արշակ Բրուսյանի: Կրթությունը ստացել է հայրենի քաղաքում, ապա և Թիֆլիսի գեղարվեստի ուսումնարանում: Վերադառնալով Ալեքսանդրապոլ, որպես նկարչության ուսուցիչ աշխատել է դպրոցներում, մասնակցել է Սուրբ Ամենավիրկիչ և Սուրբ Աստվածածին (Յոթվերք) եկեղեցիների որմնանկարների կատարմանը:

1920թ. Ալեքսանդրապոլի բուրբակյան օկուպացիայից ու Հայաստանի խորհրդայնացումից հետո, լծվել է հայրենի քաղաքի գեղարվեստական կյանքի կազմակերպման ու զարգացման գործին. նախաձեռնել է կերպարվեստի դպրոցի, նկարիչների ընկերակցության հիմնումը, որպես նկարիչ-փորագրիչ համագործակցել է պարբերական մամուլին, եղել է թատրոնի նկարիչ-ձևավորող, վարել է քաղաքի գեղարվեստի բաժինը: 1922թ. հիմնադրել է Գյումրիի կերպարվեստի թանգարանը: 1937թ. տեղափոխվել է Երևան, որտեղ շարունակել է ստեղծագործել, կատարել է բազմաթիվ մանկական գրքերի, Այբբենարանների (նաև քրդական) նկարազարդումներ:

Նրա ստեղծագործության մեջ մեծ տեղ են զբաղեցնում դիմանկարները և ազգային կենցաղը ներկայացնող թեմատիկ պատկերները, որոնցից շատերը ցուցադրվել են Ալեքսանդրապոլում, Երևանում, Թիֆլիսում, Մոսկվայում:

Նա ժամանակակիցն ու սիրված մտերիմն էր այնպիսի մեծերի, ինչպիսիք են Ավ. Իսահակյանը, Գ. Գեմիրճյանը, Ռ. Մելիքյանը, Ս. Մերկուրովը: Նա վայելում էր իր բոլոր արվեստակիցների սերն ու հարգանքը, որոնցից շատերի ուսուցիչն էր: Գևորգ Բրուսյանը մեկն էր արվեստի այն համեստ ու խոնարհ մշակներից, որոնց լավագույնս բնութագրում է Ստանիսլավսկու խորհմաստ արտահայտությունը «Միրեցեք արվեստը ձեր մեջ և ո՛չ թե ձեր անձը՝ արվեստում»:

Սույն ալբոմը, որն ի սկզբանե նախատեսված էր հրատարակության համար, ունեցավ դրամատիկ ճակատագիր: 1970-80-ականներին ձեռնարկված հրատարակության երկու փորձերը ինչ-ինչ անհասկանալի պատճառներով ձախողվեցին, իսկ 1991թ. ալբոմը Վարդերես Կարազյուզյանի գլխավորած Լոս Անջելեսի «Էրեբունի» հրատարակչատան միջոցով լույս ընծայելու փորձը հանգեցրեց բնօրինակների կորստյանը՝ կասկածելի հանգամանքներում: Այնուամենայնիվ հույս ունենք, որ ներկա հրատարակությունը ինչ-որ կերպ նաև կնպաստի կորսված նկարների հայտնաբերմանը:

Սույն հրատարակությունը իրականացվում է 1970-ականներին արված լուսապատճենների (պաշտերի) հիման վրա, ներածությունը գրել է պատմական գիտությունների դոկտոր Վարդ Բոդյանը, տախտակների բացատրագրերը հեղինակիմն են: Քանի որ թագավորներին պատկերող լուսապատճեններից մեկը՝ ամբողջությամբ, և երկուսը՝ մասամբ կորսված են, նրանց բացատրագրերը նույնպես հանված են, և Տիգրան Բ-ի և Կիլիկյան երկու թագավորների պատկերները պայմանականորեն միակցված են մեկ առաջին տախտակում:

Վերջում անհրաժեշտ են համարում նշել «Հայաստան» հրատարակչատան տնօրեն Վահագն Սարգսյանի հետևողական ու շահագրգիռ վերաբերմունքը, որի շնորհիվ հնարավոր դարձավ Գևորգ Բրուսյանի կորոզային աշխատության լույսընծայումը:



Ինքնադիմանկար

# FOREWORD

---

This album of Armenian national costumes, that is being presented to culture-loving publicity, is the result of hard work during the last decade of the painter Gevorg Broutian's (1888-1952) life.

G. Broutian was born in Alexandrapol (now Gyumri) in a honorable family, that had migrated from Taron region of Western Armenia a century ago. He was the oldest son of the distinguished musician, folklorist, pedagogue and painter Arshak Broutian.

He gained his primary education in his native town, then studied in the college of fine arts in Tiflis. Returning to Alexandrapol he has worked as a teacher of painting in public schools, took part in mural decoration of the churches Holy Savior and Holy Virgin (Seven Wounds).

After the occupation of Alexandrapol by the turks in 1920 and the sovietification of Armenia, G. Broutian became deeply engaged in the affairs of organization and development of cultural activities in his native town: he has initiated the foundation of art school, association of artists, has collaborated with the press as an engraver, has been the art decorator of the theatre, etc. In 1922 he has founded the art museum in Leninakan.

In 1937 he moved to Yerevan with his family, where continued his creative activity, illustrated many books for children, school books (also kurdish).

G. Broutian's creative work majorly consists of portraits and scenes of native folk life. Many of his works were exhibited in Alexandrapol, Yerevan, Tiflis and Moscow.

He was the contemporary and beloved friend of such celebrities as A. Isahakian, D. Demirjian, R. Melikian, S. Mercurov. He was greatly favored and respected by his fellow artists, many of them being his own pupils. He was one of those modest workmen of culture, whom bestly fit Stanislavsky's wise words: " Love the art inside yourself, not yourself in the art."

*Gnel Broutian*



Կերպարվեստի բնագավառում երկարամյա բեղմնավոր գործունեության ընթացքում բազմիցս անդադառնալով ազգագրական, ժանրային թեմատիկայի ուսումնասիրմանն ու ստեղծագործական վերապատկերմանը, նկարիչ Գևորգ Բրուտյանը հանգում է մի շատ հետաքրքիր մտահղացման՝ ստեղծել հայկական հին ու նոր տարազների գունազարդ պատկերների հավաքածու:

Նկարչի այս մտահղացումը խանդավառում է նաև արվեստաբան Գարեգին Լևոնյանին, որը ոչ միայն իրախուսում է Բրուտյանին իրագործելու յուր մտահղացումը, այլև օգնում է նրան ընտրած նյութի ուսումնասիրման աղբյուրներ գտնելու գործում:

Այս դժվարին, բայց հույժ անհրաժեշտ գործի իրականացմանը Բրուտյանը ձեռնամուխ է լինում 1940-ական թվականների սկզբից:

Մինչև Գ. Բրուտյանի սույն ալբոմի ստեղծումը, հրապարակի վրա նման քիչ թե շատ ամբողջական գործեր չկային: Բայց Ղ. Ինճիկյանի,<sup>1</sup> Վ. Հացունու,<sup>2</sup> և մասամբ՝ Ղ. Ալիշանի<sup>3</sup> կողմից ուսումնասիրված էին հայկական միջնադարյան տարազի ձևերը, պատմագիրների, անտիկ գրականության և հնագիտական տվյալների հիման վրա:

Իսկ ազգագրական տեսակետից կատարված էին հետևյալ կարևոր աշխատանքները՝ 1890-ական թվականներին իր կաթողիկոսության տարիներին Մկրտիչ Խրիմյանը Էջմիածնի թանգարանում կազմել էր արևմտահայկական տարազի և զարդերի մի մեծ ժողովածու, 1910-1930 թթ. Ե. Լալայանի, Ստ. Լիսիցյանի և այլոց ջանքերով նման ժողովածուներ էին ստեղծված Թիֆլիսում և ապա՝ Հայաստանի պատմության պետական թանգարանում: Այժմ այստեղ ստեղծվել են նաև հայ տարազը ներկայացնող լուսանկարների ֆոնդեր:

1910-1920թթ., երբ արևմտահայ գաղթականության մեջ աչքի ընկավ ազգային տարազի գրավիչ արվեստը, որոշ ծառայություն մատուցեցին նաև գեղանկարիչներ Վարդգես Սուրենյանցը, Արշակ Ֆեթվաճյանը, Սարգիս Խաչատրյանը, Լանսերեն՝ գունավոր նկարներով հաստատագրելով մի շարք կանացի և ազամարդու տոնական ու առօրյա տարազներ:

Այսպիսով՝ Գ. Բրուտյանի ալբոմի ստեղծման համար առկա էին երկու կարգի աղբյուրներ: Պատմական ժամանակաշրջանի համար հուսաոտու աղբյուրը Վ. Հացունու հիշյալ կոթողային աշխատությունն էր. ուր տեղ էին գտել հնագիտական, մանրանկարչական, պատմագրական և այլ կարգի տվյալներ հնագույն ժամանակներից մինչև Կիլիկյան թագավորության անկումը (XVI դար): Իսկ XIX-XX դարերի ազգագրական տվյալների աղբյուրը թանգարանային արժեքներն ու գեղանկարիչների գործերն էին: Գ. Բրուտյանի հայրենի քաղաք Գյումրիի թանգարանային ժողովածուներում և բանահավաքչական գործերում տեղ գտած տարազները հարստացնում էին այս երկրորդ աղբյուրը:

Նշված երկու մեծ ժամանակաշրջաններում առավել դժվարը և պատասխանատուն պատմական տվյալներն օգտագործելով՝ ամբողջական պատկերներ ստեղծելն էր, որը պատշաճ մակարդակով իրա-

<sup>1</sup> «Նախօտորին աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի տն. Հ. Ղուկաս արքունակալ վարդապետի Ինճիկյան», հատոր 2-րդ. ք. Վենետիկ, 1833թ.

<sup>2</sup> Վ. Հացունի. Պատմություն հին հայ տարազին, ք. Վենետիկ, 1923թ.

<sup>3</sup> Սիսուան. Համագրություն Հայկական Կիլիկիո և Լևոն Սեմազործ. հուսաքեալ ի Հ. Ղևոնդյա Վ.Ս.Ալիշան յովստեն Մխիթարայ, Վենետիկ. 1885թ., Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց. տեղագրեաց Հ. Ղևոնդյա Վ.Ս.Ալիշան, ք. Վենետիկ, 1890թ.

կանացնելու համար նկարիչը հետևողական, լուրջ, գեղարվեստական-ստեղծագործական աշխատանք է կատարել: Առաջինը դրամների և հուշարձանների վրա պատկերված պատմական գործիչների նկարներն ամբողջացնելն էր՝ պատմագիրների որոշ տվյալների լրացումներով: Այս դեպքում նկարիչը պատմական որոշ անձնավորությունների կեցվածքների մեջ փոփոխություն է մտցրել առանց բնօրինակը խաթարելու՝ նստած կամ չորած անձնավորությանը կանգնեցրել է, կամ մասամբ փոխել նայվածքը՝ սոցիալական դիրքին համապատասխան տեսք տալով:

Այնուհետև նկարիչը վերատեղծել է ավանդական կարգով մեզ հասած այնպիսի գործիչների նկարները, որոնք ստեղծվել են XIX դարի նկարիչների կողմից և ժողովրդի հավանությանն են արժանացել: Այդպիսիք են Վարդան Մամիկոնյանի, Գայլ Վահանի, Հռիփսիմեի և այլոց պատկերները:

Միայն մի դեպքում, Գ. Լևոնյանի խորհրդով, նկարիչը ստեղծել է V դարի քաղաքական գործիչ Վասակ Սյունեցու ամբողջական պատկերը:

Գ. Լևոնյանի հավաստմամբ այդ նկարի համար հիմք են ծառայել մատենագրական հետևյալ տվյալները. Վասակն ունեցել է միջին հասակ ու պարարտ մարմին, մազերը երկար և գանգուր, ունեցել է ոչ երկար, բայց խնամքով ձևավորված մորուք, գլխին դրել է կանաչավուն չալմա, որի վրա հարմարեցված է ճաճանչավոր ոսկե թագը, պարանոցին՝ մարգարտե մանյակ, պատմուճանը մուգ կարմիր է՝ մետաքսյա և ոսկեթել բանվածքներով, ականջներին կրել է ոսկե գնդաձև օղեր, անդրավարտիքը սպիտակ է, լայն և ծալքավոր, ուսերին կրել է սամույրե մուշտակ լայն օձիքով կանաչ և ոսկեթել բանվածքներով, ազանեփքները՝ մուգ դեղին, կոշիկները՝ անկրունկ:

Ինչպես պիտի երևա նկարների տախտակների բացատրագրերից, Գ. Բրուտյանին զբաղեցնող հարցերից մեկը եղել է վերականգնվող պատկերների գունավորումը: Գունավորման սկզբունքի ելակետ նկարչի համար հանդիսացել են պատմական տվյալները, մանրանկարչության ավանդները, ազգային ճաշակը: Նա միաժամանակ հմտորեն ու նրբորեն հաշվի է առել տվյալ գործվածքի նյութը, հատկանիշները, մշակվածքը:

XIX-XX դարերի տարագների համալիրի պատկերման պարագայում նկարիչն ավելի սակավ դժվարություններ է ունեցել, փաստական նյութերի առկայության շնորհիվ (պահպանված հագուստներ, լուսանկարներ, զարդեր և այլն):

Այսպիսով, ստեղծվել է հայկական տարազի բավական ամբողջական պատկերը ներկայացնող պատմական և ազգագրական ժողովածու, որն ըստ էության, առաջին փորձն էր բովանդակ հայ իրականության մեջ:

Ժողովածուի պատմական մասը դասավորված է ժամանակագրական կարգով, ապա և ըստ հասարակական խմբերի: Այսպես՝ թագավորներին հետևում են թագուհիները, նախարարները, իշխանները, զինվորական գործիչները և այլն:

Ալբոմի երկրորդ բաժնում զետեղված են ազգագրական բնույթի տարագները, որոնք դասավորված են ըստ հայաշատ գավառների ու քաղաքների, անկախ դրանց գտնվելու վայրից:

Երրորդ բաժնում տեղ են գտել տարբեր երկրներում բարձր դիրքի հասած հայ պետական, ռազմական գործիչներ, պաշտոնյաներ, վաճառականներ, իրենց դասին բնորոշ տարագներով, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականներ:

Հայաստանն իր երեքհազարամյա պատմության ընթացքում ստեղծել և մարդկային քաղաքակրթության գանձարանին է հանձնել նյութական և հոգևոր մշակույթի բազում հարստություններ: Այդ հարստություններից մեկը՝ հայ ժողովրդի շողշողուն տարազը, իր բազմազանությամբ, գունագեղությամբ և շքեղ զարդարանքով ազգային պարավեստի և ժողովրդական ու մոնումենտալ ճարտարապետության կատարյալ գուգակիցն է: Ահա այս հարստությունը փրկելով մոռացումից, նկարիչ Պ. Բրուսյանը մեծ ծառայություն է մատուցել արվեստին ու տարազի պատմությանը:

Հայկական տարազի պատմությունը նույնքան հին է, որքան հայ ժողովրդի պատմությունը: Հայ ժողովրդի կազմավորման շրջանի տարազի պատմության վերաբերյալ աննշան ակնարկներ կան միայն հունա-հռոմեական գրականության մեջ: Հերոդոտը առաջինն էր, որի վկայությամբ հայ-արմենների հանդերձանքը և գեները նույնն էին, ինչ փյուռփակյանը: Նրա հավաստմամբ ճտքավոր կոշիկներ և հյուսածո սաղավարտներ կրող արմեններն ունեին կարճ նիզակներ և փոքրածավալ սաղավարտներ:<sup>1</sup>

Հերոդոտից հետո, արմենների բնակավայրը և նրանց կենցաղը հանգամանորեն ուսումնասիրած հեղինակը Քսենոփոնն է: Բայց նրա հաղորդումները հայկական տարազների վերաբերյալ նույնպես աննշան են, լոկ ակնարկային: Այսպես, օրինակ, նա արմենների երեխաների տարազը համարել է բարբարոսական, որից կարելի է միայն ենթադրել, թե դա ցեղային հասարակ հագուստ է եղել:<sup>2</sup> Արմենների արքայորդի Տիգրանի խույրի,<sup>3</sup> կանացի<sup>4</sup> զարդերի և տղամարդկանց ոսկով զարդարվելու վերաբերյալ կան լոկ ակնարկներ<sup>5</sup>:

Խայտուբների ցեղի հանդերձանքից հիշատակված են վուշից պատրաստված և ամբողջ իրանը ծածկող գրահները, զինվորական սաղավարտները ու տոնապանները<sup>6</sup>: Հիշատակված են Մակրոնների ցեղի ալծի մազից պատրաստվող զգեստները, որոնց ձևերը չեն նկարագրված<sup>7</sup>:

Պատմականորեն չի հաստատվում Ստրաբոնի հաղորդումն այն մասին, թե իբր հայկական տարազը թեսալական ծագում ունի<sup>8</sup>:

Մոտավորապես սա է այն ամենը, որով որոշ պատկերացում ենք կազմում հայկական ցեղային կազմավորումների տարազների վերաբերյալ:

Բուն հայկական տարազի պատմությունը նույնպես աննշան չափով է արտացոլում գտել հայկական միջնադարյան գրական հուշարձաններում: Բայց այս անգամ մենք գործ ունենք արդեն պետականության ունեցող ժողովրդի տարազի հետ, որը, համեմայն դեպս, իր հետ բերում է ցեղային շրջանին հատուկ որոշ ձևեր և մանրամասներ: Տարակույս չունենք, որ ցեղային շրջանից ժառանգած տարազներն իրենց անընդհատ զարգացման ճանապարհին կրում են որոշակի փոփոխություններ. առանց սեփական ոճը կորցնելու: Գրանք իրենց վրա կրում են նաև այն ժողովուրդների տարազների մասնակի ազդեցությունները, որոնց հետ երկարատև շփման մեջ է եղել հայ ժողովուրդը: Ինչպես որ ցեղային շրջանի սոցիալական և կրոնական գաղափարներն իրենց ազդեցությունն են գործել հայկական մանրանկարչության վրա,

<sup>1</sup> Геродот, История в девяти книгах, 1886г, кн VII 73 հմմտ. Հ Մանանյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Խ.Ա. Եր. 1949, էջ 56:

<sup>2</sup> Քսենոփոն, Անարասիս, գիրք IV, գլ.V, 33:

<sup>3</sup> Քսենոփոն, Կյուրուպեդիա, գիրք III, գլ. I, 13:

<sup>4</sup> Անդգիրք III, գլ.I, 2:

<sup>5</sup> Անդգիրք III, գլ.III, 3

<sup>6</sup> Քսենոփոն, Անարասիս, գիրք IV, գլ.VII, 15,16:

<sup>7</sup> Անդգիրք IV, գլ.VIII, 3:

<sup>8</sup> Ստրաբոն, Բաղեց և բարզմանեց Հ Անատյան, Եր., 1940, էջ 63:

այդ նույն գաղափարները միշտ այդպիսի ազդեցություն են ունեցել ամեն մի ցեղի տարագի ու զարդարվեստի վրա: Այստեղից էլ՝ ավատատիրական շրջանի տարբեր ժողովուրդների տարազների տարբերությունները: Յուրաքանչյուր ժողովուրդ, ինչպես և հայերը, տարբեր ժամանակներում ֆունկցիոնալ առումով ունեցել է տարագի առանձնահատկություններ: Գրա պատճառն այն է, որ տվյալ ժողովուրդը տարբեր ցեղային կազմավորումների տարազային առանձին ավանդույթներ է ժառանգել:

Տարագի և ժողովրդական զարդարվեստի առանձնահատկությունները չէ, որ զբաղեցրել են հայկական միջնադարյան հեղինակներին: Աննշան են ժողովրդից առնված նրանց օրինակները: Պատմիչներին զբաղեցնողը հիմնականում եղել է ավատատիրական վերնախավի՝ թագավորների, նախարարների, քաղաքային ունևոր դասերի, եկեղացական տարագի ամենատարբեր ձևերն ու զարդարանքները: Այդ հաղորդումների մի զգալի մասն էլ, անշուշտ, վերաբերում է օտար տարագին, քանզի միջնադարյան օրենքների համաձայն կախման մեջ գտնվող հայկական բարձրաստիճան անձնավորությունները բարոյական ներգործությամբ կրում էին նաև օտարներից նվեր ստացած շքեղ տարազներ: Նույն այս պատճառով էլ հայկական տարազն ուսումնասիրողները դժվարանում են սահմանագատել ազգայինը և օտարը: Համեմայն դեպս, հայկական գրավոր վկայությունները, որոնցից օգտվել է Գ.Բրուսյանը, հայագիտության համար կարևոր են:

Չարգացած ավատատիրության շրջանում ազգային և օտար արքայական տարազները որոշակիորեն նման էին: Գրանք ըստ պատմագիրների շքեղաշուք էին՝ զարդարված թանկարժեք ակներով ու մարգարիտներով: Բարձրաստիճան պաշտոնյաների երկար ու զարդարուն պատմուճանները, արքայական վերարկուները, անդրավարտիքները, գոտիները, շքեղ թագերը, խույրերը և գլխարկները, սաճույրները, կոշիկները, ծիրանիները, ինչպես հաղորդում են պատմիչները, լույսից փայլատակում էին: Գրեթե նույնքան շքեղ էին նաև հայոց զինվորականների հագուստները, որոնց ուղեկցում էին ժամանակի զենքի տեսակները:

Պատմագրությունն պատշաճ տեղեկություններ է հաղորդել եկեղեցական ծիսական և առօրյա տարազների վերաբերյալ: Առանձնապես արժեքավոր է Ստ. Օրբելյանի ձեռքով գրված եկեղեցականների ինը դասերի ծիսական տարագի նկարագիրը: Գրա համաձայն այդ տարազները զարդարված են եղել ոսկեթել ասեղնագործությամբ, թանկագին ակներով ու մարգարիտներով:

Միջնադարյան զարդեղենները, որ պատրաստված են եղել ոսկուց, արծաթից, թանկագին քարերից, հաճախ հիշվում են տարագի վերաբերյալ ակնարկներում: Գրանք գոտիներ են, մատանիներ, ապարանջաններ, մանյակներ, զինդեր, ապիզակներ (ըստ Վ. Հացունու՝ գոտիաձև կրծքազարդ)<sup>1</sup>, գլխի հարդարանքների զարդեր: Չարդերի գործածության հետ միջնադարում հայտնի էին նաև օձանելիքները և օձվելու սովորությունը: Ընդ որում՝ օձվում էին ոչ միայն կանայք, այլև երիտասարդները: Նույնիսկ որոշ հագնորականներ ոսկեփոշով զարդարում էին իրենց մորուքները:

Հայկական միջնադարյան տարագի և զարդերի վերաբերյալ մատենագրական տվյալները հաստատվում են նույն ժամանակաշրջանի մանրանկարչությամբ և որոշ քանդակապատկերներով: Մանրանկարների մեծ մասը թեև ներկայացնում է հոգևոր գործիչների և սրբերի պատկերներ, բայց մեզ է հասցրել նաև թագավորների, թագուհիների, իշխանավորների, քաղաքացիների, շինականների, հովիվների, երեսխանների, երիտասարդների և տարբեր հասակի կանանց տարազներ, որոնք մեծ չափով տեղ են գտել սույն ալբոմում:

Այդ բոլորը, մասնակի բացառությամբ, հայկական ավատատիրական շրջանի տարազներ են, որոնց

1. Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 99-10:

մեջ կարելի է գտնել ինչպես նախորդ, այնպես էլ հաջորդ դարաշրջաններին հատուկ տարրեր:

Հազարամյակների միջով անցած հայկական տարազը պահպանելով իր ինքնուրույն ձևերը, XIX դարում և XX դարի սկզբին մեզ է ներկայանում առանձնահատուկ մշակվածությամբ, ասեղնագործական բարձր արվեստով:

Երկրում ավատատիրական հարաբերությունների երկարաձգման հետևանքով պահպանվող հայրի-րավական ընտանեկան հին հարաբերությունները գյուղական բնակվայրերում անաղարտ կամ գրեթե անաղարտ էին պահում հատկապես կանացի տարազները: Առևտրաարդյունաբերական և ապա դրամատիրական նոր հարաբերությունները հայկական գլխավոր քաղաքներում և այն վայրերում, ուր առավելապես կենտրոնացած էին բուրժուականացող խավերը, հայկական ավանդական տարազը ենթարկեցին որոշ վերամշակման: Քանի դեռ այդ դասակարգը նոր էր, քաղաքներում բավարարվում էր ազգային տարազի կատարելագործումով: Տարազի և առհասարակ հագուստների համալիրի վերամշակումն այդ ժամանակշրջանում չէր խեղաթյուրում նրա հնագույն ձևերը, այլ հարմարեցվում էր քաղաքային նոր կենցաղավարությանը: Այս կարգի արդիականացման գործընթացը, իհարկե, նոր չէր: Ավատատիրական խոշոր կենտրոններում՝ Անիում, Դվինում, Երևանում, Կարինում և այլուր տիրող վերնախավերը շատ վաղուց զբաղվում էին ժողովրդական տարազի քաղաքայնացմամբ: Բայց այդ վերնախավերի մտքած ձևափոխումները տարազի համազգայնացմանը չէին հասցնում. յուրաքանչյուր ազգագրական շրջանի կենտրոնական քաղաքում վերամշակվում էին իրենց հատուկ տարազները: Դվինն ու Երևանը վերամշակում էին Արարատյան տարազը, Անին ու Կարինը՝ Բարձր Հայքինը, Վանը՝ Վասպուրականինը և այլն:

Կապիտալիզմի շրջանում տարազի արդիականացումն ավելի ակնհայտ դարձավ: Մասամբ պահպանելով հին ձևերը, քաղաքային-ազգային տարազը ձևափոխվեց: Եվրոպական տարազի որոշ տարրեր խառնվեցին տեղականի հետ, իսկ տեղ-տեղ ամբողջապես փոխառնվեց եվրոպականը: Փոխառումն հիմնականում ժառանգեցին բուրժուական վերնախավը և մտավորականության մի մասը: XIX դարի ընթացքում Կ. Պոլսում, Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարինում, Բաքվում, Վանում և այլուր ստեղծել էին ոչ միայն վերնախավերին, այլև արհեստավորական շրջաններին հատուկ տարազի տարատեսակներ, որոնք նույնպես հեռու էին համազգային համարվելուց:

Գյուղական շրջաններից քաղաք թափանցած տղամարդիկ այդ նորաձևությունների առանձին տարրերը տեղափոխում էին գյուղաշխարհ:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին քաղաքային ոտնամանը, անդրավարտիքը և գլխարկը խառնվելով գյուղական հագուստի հետ, նրան տվեցին այլազան բնույթ: Սակայն այդ գործընթացը հայկական գյուղական ոչ բոլոր շրջաններին և ոչ բոլոր խավերին էր հատուկ: Արևմտահայաստանում՝ Վասպուրականը, Մուշը, Մասունը, Մոկսը, Շատախը, ինչպես նաև Պարսկահայքը և Պոնտոսը, իսկ Արևելահայաստանում՝ Լոռին, Չանգեգուրը, Արցախը և Չավախքը, բավական անաղարտ էին պահել տեղական տարազները. եվրոպական տարազն այդ շրջաններում չնչին տարածում ուներ: Չարգացող քաղաքային վայրերում ազգային-եվրոպական խառնուրդը աստիճանաբար տեղի տվեց եվրոպականին, որը տարածվում էր Ռուսաստանի միջոցով: Այդ գործընթացը Հայաստանի երիտասարդության մեջ ավարտվեց 1920-ական թթ. վերջերին: Գյուղական մտավորականության երկու սեռն էլ 1920-ական թթ. ամբողջապես քաղաքային տարազով էին: Իսկ Մվլյուրքի հայությունը հասկանալի սլատճառով գրեթե լիովին ընդունեց եվրոպական հագուստը: Հայաստանի գյուղական վայրերում հին ավանդույթների պահպանման շնորհիվ տարբեր սեռերի ու հասակների ազգային տարազները տարբեր ժամանակներում ավելի դանդաղորեն զիջեցին իրենց տեղերը: Նոր սերնդի տղամարդկանց տարազը 1930-ական թթ. գրեթե վերջնականապես քաղաքայնացած էր: Ավագ սերնդի տղամարդիկ հին տարազը պահպանեցին մինչև 1950-ական թթ.

վերջերը: Ավագ սերնդի կանայք ավելի պահպանողական գտնվելով, հին տարազը տեղ-տեղ պահպանում էին մինչև 1960թթ. (Չանգեզուր, Արցախ): Այդպիսով՝ հայկական ազգային-ավանդական տարազը XX դարի կեսերին լիովին անցավ պատմության գիրկը:

**Գ. Բրուտյանի** ալբոմում տեղ են գտել ինչպես միջնադարյան, այնպես էլ XIX դարի ավանդական տարազի մեծ մասը, ինչպես նաև տղամարդկանց այն նորաձև տարազները, որոնք XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին ստեղծվել են Երևանի, Թիֆլիսի Հավլաբար կոչվող քաղաքամասի և Ալեքսանդրապոլի դերձակների համագործակցությամբ, և հայտնի էին որպես «լոթու տարազ»:

Ալբոմում հաստատագրված պատմական տարազը խմբավորման հնարավորություն չի տալիս, որովհետև այն մեզ է հասել մեծ ընդհատումներով. զարգացման ընթացքը խաթարվել է երկրի անկայուն քաղաքական ու տնտեսական դրության պատճառով: Ուստի մենք կփորձենք խմբավորել միայն ազգագրական-ավանդական տարազը, որ արտացոլվել է Գ. Բրուտյանի սույն գործի մեջ և, որը համազգային ընդհանրության չհասնելով, XIX դարում և XX դարի սկզբին մնաց ազգագրական շրջանների սահմաններում:

**1. Արարատյան գարազ:** Մա ընդգրկում էր արդի Հայաստանի Արարատյան գոգավորության շրջանները՝ Երևանը, Կոտայքը, Թիֆլիսի Հավլաբար քաղաքամասը, ինչպես նաև Պարսկահայքի ու Պարսկաստանի այն շրջանները, որ XVII դ. սկզբին բռնագաղթով բնակեցվել էին Արարատյան շրջանի հայերով:

**2. Սյունյաց գարազ:** Այս տարազի հայրենիքը հավասարապես Սյունիքն ու Արցախն են: Գողթան գավառի տարազը դրա մի փոփոխակն էր: Վերջին 200 տարիների ընթացքում Սյունյաց և Գողթան գավառի տարազը ժողովրդի տեղաշարժերի միջոցով տարածվել է խորին Հայքի շրջաններում, Տավուշում, Պարսկահայքում և այլուր:

**3. Բարձր Հայքի գարազ:** Ընդգրկում էր Բարձր Հայքի նահանգը, որտեղ ստեղծվել էին հարևան գավառները, որոնք Բարձր Հայքի հետ մեծ շփման մեջ են եղել: Այս տարազի փոփոխակները տարածված էին Տուրուբերանի, Կարսի, Բագրևանդի, Համշենի տարածքներում: Կարևոր հայության զանգվածային արտագաղթների միջոցով Բարձր Հայքի տարազը լայնորեն տարածվեց նաև Շիրակում, Չավախքում, Ախալցխայում, Ճալիայում և այլուր:

**4. Վասպուրականի գարազ:** Ծագել և տարածվել էր Վանա լճի ավազանում և նրան հարող մի քանի շրջաններում, ինչպես նաև Մասունում: XIX դարի վերջին և XX դարի սկզբին Վասպուրականի տարազն այդ սահմաններում գրեթե միաձևության էր հասել:

**5. Կիլիկյան գարազ:** Կիլիկյան հայկական տարազը, որը մեզ է հասել XIX դարի վիճակով, առաջացել է միջնադարում այնտեղ տեղափոխված տարբեր ազգագրական շրջանների հագուստների ձևերի միաձուլումից: Գ. Բրուտյանի ալբոմում տեղ են գտել միայն երկու տղամարդու քաղաքային հագուստներ: Անտարակույս Հայաստանի մյուս մեծ ու փոքր շրջանները, որոնք չհիշատակվեցին այս դասակարգումներում, նույնպես XIX դարում պահպանում էին տեղական տարազի առանձնահատկությունները: Բայց որովհետև այդպիսի վայրերի (Փոքր Հայք, Չորրորդ Հայք և այլն) նյութերն անբավարար են հավաքված, կամ իսպառ մոռացված են, խմբավորել հնարավոր չէ:

Իր պակասավոր կողմերով հանդերձ ներկայացվածը հայ ժողովրդի նյութական մշակույթի մի մեծ հատվածի պատմությունն է: Ինչպես ցույց են տալիս այդ նյութերը, մեր տրամադրության տակ է ժողովրդի ողջ հասարակական կազմը: Նկարչի համար հենց այդ էլ հիմք է ծառայել տարազի միջնադարյան բաժինն ըստ խավերի դասակարգելու համար:

Միջնադարյան և ազգագրական տարազները հարուստ աղբյուր են նաև ասեղնագործության արվեստն ուսումնասիրելու տեսակետից:

Չարդարվեստի զգալի մասը հայկական տարազի բնական ուղեկիցն է, որի շատ տարրեր սքանչելի

ճանրանկարչական նրբությամբ արտացոլված են ներկա ալբոմի մեջ: Այլ ժողովուրդների նման հայերն էլ իրենց տոնական և ծիսական տարազները գարդարել են նախշերի մի շարք ձևերի կիրառմամբ: Առաջինը, որ շատ վայելում պահպանվում էր մինչև XX դ. սկզբները, գործվածքների մեջ կիրառվող զարդադեկորներն էր: Երկրորդը՝ բազմապիսի դաջվածքներով գործվածքները գարդարելն էր: Երրորդը՝ տարազն ասեղնագործությամբ հարդարելն էր ամենատարբեր գույներով ու ձևերով: Այդ բոլոր դեպքերում նախշագարդման ոգին ներկայացնում էին բուսական, կենդանական ու երկրաչափական ձևերը, ինչպես նաև դրանց ոճավորված պատկերումները, որոնք խորհրդանշում էին ամենատարբեր հին հավատալիքներ ու կրոնական պատկերացումներ:

Ասեղնագործության մասնագետները տարբերակելով այս բոլոր երանգները, մատնանշում են բանվածքի մի շարք դպրոցներ՝ Վասպուրականի, Բարձր Հայքի, Մյունիքի, Արարատյան հովտի, Կիլիկիայի, Թիֆլիսի, Կ.Պոլսի և փոքրասիական ու այլ հայ գաղթավայրերի ասեղնագործական ուղղություններ՝:

Որքան էլ դրանք իրենց գարդարման արվեստով օժտված էին համազգային հատկանիշներով, այնուամենայնիվ, յուրաքանչյուր ազգագրական շրջան, մինչև ազգային տարազի կորուստը, պահպանել էր նախնականության բազմաթիվ հետքեր: Դրանք կիրառվում էին համաձայն գեղագիտական պահանջների. մեծ մասամբ առանց հնագույն բովանդակության գիտակցման: Ազգագրական տեսակետից այդ նախնական հետքերը ներկայացնում են խորհրդանիշերն այն ամենի, ինչն աղերսվում էր պտղաբերության տոտեմիզմի, կարծեցյալ ակնհարության, աստելոսյին հավատալիքների, հեթանոսական ու քրիստոնեական ամենատարբեր պաշտամունքների հետ և այլն:

Չարդարման չարրորդ միջոցը մետաղից, թանկագին քարերից, մարգարիտներից և այլ նյութերից պատրաստվող գարդերն էին: Մանյակների, կրծքագարդերի, գոտիների, ապարանջանների և այլ գարդերի մեջ ևս առկա են բազմապիսի տարրեր, որոնք ներկայացնում են ոչ միայն պտղաբերությունն ու առողջությունն ապահովող միջոցներ, այլև դիցաբանական խորհրդանիշեր:

Գեղագիտական և պատմական տեսակետից ազգային տարազի բեմականացումը կիրառական արվեստի շատ կարևոր հարցերից մեկն է: Այժմ հայկական բեմի համար պատմական են դարձել ոչ միայն սփյուռքաբնակների, այլև XIX դարի ավանդական բոլոր տարազներն իրենց համապատասխան ազանելիքներով ու գլխի գարդերով: Մենք նկատի ունենք պատմական թեմաներով օպերային ու թատերական ներակայացումները, ազգագրական պարարվեստի բոլոր տարատեսակները: Տարազը լույս է ցնում այն արտահայտություն է և՛ ժամանակը, և՛ մարդկանց սոցիալ-տնտեսական պատկանելությունը, և՛ սովյալ շրջանի ազգային ճաշակը, և՛ սեռահասարակական դասակարգումները: Իսկ զգեստավորման հարցում թույլ տրված ամեն մի մեղանշում խանգարում է պատմական ճշմարտության ըմբռնմանը: Ցավոք, սխիտի նշել, որ հայկական թատերական նկարիչները, գրեթե առանց բացառության, հայ տարազը բեմականացրել և բեմականացնում են աղաղակող թերություններով: Նրանք պատմականությունը զոհաբերում են էֆեկտներին: Նրանք երբեմն դիմում են զգեստավորման կեղծ ձևերի, հորինում են մտացածին տարազներ, հաճախ կատարում մեխանիկական փոխառումներ, իսկ լավագույն դեպքում՝ շփոթում հայկական ազգագրական տարբեր շրջանների տարազները: Հաճախ է պատահում, որ հայկական պատմական տարազին մեխանիկորեն խառնում են տարբեր ազգագրական շրջանների տարազների տարրերը: Երգի-պարի անսամբլներում ազգային տարազը երբեմն անճանաչելիորեն աղավաղման է ենթարկվում: Այստեղ տարազի զգայի մասը կազմում են փոխառությունները և մտացածին տարրերը: Ինչպես երևում է ազգային կենցաղից և Գ. Բրուսյանի ալբոմի նյութերից, հայ երիտասարդության համար բնորոշ ազանելիքները խիստ

սակավ տեղ են զբաղեցնում: Նկարիչները զարմանալի ամաչկոտություն են դրսևորում, երբ խոսքը հայկական տրեխին, ոտնամաններին և սոնական շքնաղ գուլպաներին է վերաբերում:

Բացի գործնական նշանակությունից, ալբոմի նյութերը հնարավորություն են ընձեռում ընկալել ազգագրական շատ երևույթներ, որոնք կարևոր տեսապատմական նշանակություն ունեն: Այսպես, օրինակ, տարբեր ազգագրական շրջանների տարազային փոխազդեցությունները և դրանց մեջ ընդհանուր, համազգային ձևերի առաջացման միտումները: Չէ՞ որ XIX դարի հայկական տարագները խստորեն ազգագրական շրջանների բաժանելը, որոշ իմաստով պայմանական է, որովհետև նրանց մեջ կան նկատելի ընդհանրություններ: Մյուս կողմից, ալբոմի նյութերը տեսանելի են դարձնում հայ ժողովրդական (ինչպես նաև միջնադարյան տարագներ) և օտար ժողովուրդների, մանավանդ այն ժողովուրդների տարագների փոխազդեցությունը, որոնց հետ հայերը հազարամյա պատմական շփման մեջ են եղել: Այդպիսի փոխազդեցություններ կան հայկական և պարսկական, արաբական, վրացական, հելլենական տարագների միջև:

Ժողովրդական տարագի համալիրների մեջ արտահայտված են տոհմային շրջանից անցած այնպիսի տարրեր, որոնք բացահայտում են ժողովրդի կրոնաբարոյական ընկալումները: Հիշենք զարդերի տեսակները և զարդարվեստի մեջ պահպանված խորհրդանշաններ և այլն: Իսկ դրանց հետ աղերս ունեն զգեստների սեռատարիքային դասակարգման առանձնահատկությունները, մարդկանց ժեստերը (շարժման գիտակցվող և մանավանդ չգիտակցվող ձևերը), պարային շարժումների այն բոլոր պահերը, որոնք իմաստային տեսակետից արտահայտում են նաև տարագի հետ ունեցած կապերը: Որոշակի տարագ կրողների կեցվածքում հաճախ արտահայտվում են ոչ միայն սեռատարիքային, այլև սոցիալ-դասային նախասկզբնական խորհրդանիշեր: Այս ամենը նկարիչը պատկերել է խորը զգացողությամբ, ճշգրտությամբ, գեղարվեստական մեծ ճաշակով ու վարպետությամբ, հատուկ ուշադրություն դարձնելով տարագը կրողների ազգագրական տիպային նկարագրին, ընդհուպ հասնելով դիմանկարային ճանաչելիության, դինամիկ խմբավորումների, կենդանի կեցվածքների ու հարաբերությունների:

Վերը նշվածը Գ. Բրուտյանի գործը դարձնում է անգնահատելի թե՛ ազգագրական-ճանաչողական, թե՛ գեղարվեստական առումներով: Այն մեծ արժեք է ներկայացնում նաև գործնական տեսակետից, որպես անսպառ նյութ, հագուստի մոդելավորմամբ զբաղվողների համար:

**ՎԱՐԳ ԲԴՈՅԱՆ**

*Պատմական գիտությունների դոկտոր*



During its centuries-old history Armenia has created spiritual and material wealth and stored it in the treasure-house of the mankind civilization. One of these is the national costume of the Armenian people, which is noted for its diversity, colourfulness, and luxurious ornaments. Broutian's present album, which he began to design at the beginning of the 1940s, represents the Armenian costume completely. Art critic Garegin Levonian encouraged and helped the artist in this undertaking.

Before the creation of Broutian's album there weren't such works on the arena. But Gh. Indjidjian, V. Hatsuni and partially Gh. Alishan had investigated the types of the medieval Armenian costume based on the data of historians, the classical literature and archeology. And from the point of view of ethnography the following works were done. In the 1890s Catholicos M. Khrimian made a big collection of western Armenian costume and ornaments in Edjniatsin museum. From 1910 to 1930 E. Lalaian, St. Lisitsian and others did their best to make such collections in Tiflis and then in Armenian state museum of history. Funds of photographs representing Armenian national costumes were also created here.

During 1910-1920 artists Vardges Sureniants, Arshak Fetvadjan, Sarkis Khachatrian, Lansere contributed to the history of national costume, painting a number of festive and everyday costumes for men and women.

Thus the creation of Broutian's album was based on two sources. For the historical era the reliable source was Hatsuni's above mentioned monumental work, where there were archeological, miniature, historiographical and many other data from ancient times till the fall of the Cilician kingdom (XVI century). And in the XIX-XX centuries the sources of ethnographical data were museum values and the works of the painters. This second source was enriched by the costumes found in the museum collections in Leninakan and in the works of folklore collectors.

The artist did a serious, consistent work, creating complete pictures based on the historical data. First he restored the portraits of the historic individuals that are pictured on the coins and other monuments based on their head ornaments and busts, with the help of some additional data of historians. In this case the painter made changes in the pose of some individuals without distorting the picture, giving an appropriate appearance to their social status.

Then he renovated the portraits of some historic figures such as Vardan Mamikonian, Gile (Wolf) Vahan, Hripsime and others, which were painted by the artists of XIX century, were met with people's approval and reached us. Only in one case, following G. Levonian's advice, the artist painted the portrait of V century political figure Vasak Syunetsi, without any changes. According to G. Levonian, this picture is based on the following annalistic data: Vasak is of middle stature, fat, with long and curly hair and a trim beard, he has a greenish turban on his head on which the sparkling golden crown is situated, he wears a pearl necklace, his cloak is deep purple with embroidery in silk and gold, he wears gold globe-shaped earrings, his trousers are white, wide and pleated, he has a sable fur coat on his shoulders with a wide collar and green and goldish embroidery, his shoes are deep yellow and without heels... One of the questions that Broutian was interested in, was the colouring of the restored pictures. For Broutian, the principles of colouring were the historical data, the traditions of miniature, the national taste. At the same time he took into consideration the material, qualities and the texture of the cloth.

The history of Armenian national costume is as old as the history of Armenian people. Only in the Roman and Greek literature there are imperceptible hints concerning the history of the national costume from prehellenistic period and different tribal organizations. According to Herodotus, the Armenians (Armenians) wore high boots and wattled helmets and had short lances and small shields.

After Herodotus, the author who investigated the way of life of the Armenians, was Xenophon. But his records about the Armenian national costume were also insignificant, he simply hinted. For example, he considered the children's costume of the Armenians barbaric, from which we can assume that it was a simple tribal clothing. There are only allusions about the Armenian prince Tigran's tiara, women ornaments and the men who liked to wear gold jewelry. About the tribe of Khalyubs only flax armours which cover the whole torso, military helmets and gaiters are mentioned. Also the clothes made of goat hair of the Macron tribe are mentioned, but their fashions are not described.

Strabon's statement that the Armenian national costume has Thessalic origin is not confirmed historically.

Here is the abrupt information from which we get an idea about the costumes of Armenian tribal organization.

The history of Armenian costume has found its reflection in the Armenian medieval literature. This time we deal with the costume of the people having state already, but still it has some fashions and details that are typical for the tribal period.

Generally, it was not the peculiarities of the national costume and the art of ornamentation that interested the Armenian medieval authors. The examples that they took from the people are imperceptible. The historians were interested in different kinds of costumes and ornaments of the feudal upper class - the kings, nakharars (big feudal lords), the proprietary and the clergy of high rank. The most part of those statements refers to the foreign costume, because according to the medieval laws, Armenians of high rank who were dependent on other countries, wore also foreign luxurious costumes. That's why it's difficult for the investigators of the Armenian national costume to distinguish the national from the foreign. In any case, Armenian written data Broutian made use of, are very important for Armenology.

According to the historians, national and foreign royal costumes of the feudalism were valuable, decorated with precious stones and pearls. The long mantles, royal coats, girdles, crowns, tiaras, hats, sable fur coats, shoes of the officials were luxurious and splendid. The costumes of the Armenian military were also ornamented, which were supplemented with the arms of that time.

The history gave us much more information about the ceremonial and everyday church costumes. St. Orbelian represented a very valuable description of the ceremonial costumes of clergy, according to which they were decorated with embroidery in gold, precious stones and pearls.

The ornaments that supplemented the medieval costume were gold, silver girdles studded with precious stones, rings, bracelets, necklaces, earrings, brooches, articles for head decoration. (acc. to Hatsuni).

The annalistic data about the Armenian medieval costume and ornaments are confirmed by the miniature and some traceries of the same era. Though the most part of the miniatures represent the pictures of the ecclesiastics and saints, but there are also costumes of the kings, queens, lords, civilians, peasants, shepherds, children and women of different age, and these costumes are included in the present album.

All these, with some exceptions, are the costumes of the Armenian feudalism. At the beginning of this

period, one can find costume elements of the previous social system and at the end of it elements typical for the following social system.

The Armenian national costume which reached us through the millenniums, preserving its characteristic features, in XIX century and at the beginning of XX century is represented by skillful embroidery. Because of the extension of the feudalism in the country, the patriarchal family relations in the villages kept pure (unchangeable), especially the costumes of women. The development of trade and industry and new capitalistic relations resulted in some changes of the Armenian traditional costume in big cities and in those places where the bourgeoisie lived. And, as that class was new, it was satisfied only with the improvement of the national costume in the cities. At that time the changes of the costume didn't distort its old looks, but adjusted it to the new way of the life of city. This kind of modernization was not new, of course. In the biggest feudal centres, Ani, Dvin, Yerevan, Karin, etc. the upper classes gave a city look to the national costume. But those changes didn't nationalize the costume. In every central city of the ethnographical region special costumes were restored. Dvin and Yerevan restored the costume of Ararat region; Ani and Karin-the costume of Bardzer Haik; Van- the costume of Vaspurakan, etc.

During the capitalism, the modernization of national costume became more evident, partially preserving the old types, the national costume of the city was distorted. Some elements of the European costume were mixed with the elements of local costume, and in some places only the European was adopted. On the whole, the bourgeois upper classes and the part of the intelligents adopted it.

In the course of XIX century, varieties of costumes characteristic not only of the upper classes but also of the artisans, were created in Constantinople, Tiflis, Yerevan, Alexandrapol, Karin, Baku, Van, etc, but they were far from being national.

As a result of the contact of city and village, the elements of the modern city costume were transferred into the village. At the end of XIX and the beginning of XX century shoes, trousers and hats, that were worn in the city, were mixed with the village costume and gave the latter a different character. But this process wasn't characteristic of all the Armenian rural regions and the classes. In Western Armenia, in Vaspurakan, Moosh, Sasoon, Moks, Shatakh, as well as in Parskahaik and Pontos and in Eastern Armenia, in Lori, Zangezoor, Artsakh and Djavakhk the local costumes remained unchangeable, the European costume in those regions was not widely spread. In the developing cities the European costume which was spread through Russia, gained the ground. That process was over at the end of the 1920s in Soviet Armenia. In the 1920s both sexes of the village intelligents completely wore the city costume. And the Armenians abroad adopted the European costume almost completely. In the rural places of Soviet Armenia, thanks to the preservation of the old traditions, the national costumes of both sexes and different ages gave in more slowly, in different times. In the 1930s, costume of men of the new generation became civic once and for all. The men of the older generation preserved the old costume till the end of the 1950s. The women of older generation were more conservative. At some places (Zangezoor, Artsakh) they preserved it till 1960s. Thus, the Armenian traditional national costume in the middle of XX century completely became a history.

In Broutian's album one can see both the medieval costume and the most part of the traditional costume of XIX century, as well as the new costumes of men which were made by the cooperation of the tailors of Yerevan, Tiflis Havlabar districts and Alexandrapol at the end of XIX and at the beginning of XX century, which were known as the "costume of cloties".

Ornamentation had always accompanied the Armenian national costume. Many elements are shown in

this album. Like other peoples, the Armenians also decorated their ceremonial and festive costumes with a number of ornaments. The first one, which was preserved in many places, till the beginning of XX century was the ornamentation used in the textile fabric. The second one was the printed cloth (ornamentation of the textile fabric with various design). And the third one was the ornamentation of the costume with embroidery of different colours and kinds. The experts of the embroidery, distinguishing all those shades, note a number of schools of embroidery, e.g. of Vaspoorakan, Bardzer Haik, Syunik, Ararat valley, Cilicia, Tiflis, Constantinople, etc. Though they were endowed with national qualities, but every ethnographical region had preserved various traces of the primary nature before the disappearance of the national costume. They were used in accordance with the aesthetic needs, without realization of the primary meaning (content). In all cases the ornamentation was represented by the forms of plants, animals and geometrical figures as well as by their symbolic pictures, which were connected with the fertility, totemism and different worships of Christianity and paganism.

The fourth means of the ornamentation was the ornaments made of metal, precious stones, pearls and other materials. On necklaces, brooches, girdles, bracelets, etc. there are various elements, which represent not only the means that ensure fertility and health, but also many of mythological phenomena, that have to be investigated.

It's important to note, that not only the costumes with all their elements and accessoires, but also the persons wearing the costumes, are pictured with great vividity, grouped and disposed in characteristic compositions, thus reaching vital expressiveness and even portragal identity.

This makes Broutian's work greatly valuable both from ethnographic and artistic attitudes. It can be also extremely helpful to the costume designers of present days.

VARD BDOIAN  
*Doctor of History*

# ՏԱԽՏԱԿՆԵՐ TABLES



---

# ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱԺԻՆ HISTORICAL SECTION



## ՏԱԽՏԱԿ I. ԹԱԳԱՎՈՐՆԵՐ

1. Տիգրան Բ Մեծ, 95-55, Ք.ա.
2. Լևոն Բ, Կիլիկիայի թագավոր, 1186-1219
3. Լևոն Ե, Կիլիկիայի թագավոր, 1320-1349

## TABLE I. KINGS

1. Tigran II, The Great, 95-55 BC
2. Levon II, King of Cilicia 1186-1219
3. Levon V, King of Cilicia 1320-1342



## **ՏԱԽՏԱԿ II. ԹԱԳԱՎՈՐՆԵՐ, ՍՊԱՍԱԼԱՐՆԵՐ**

1. Սմբատ Բ Բագրատունի, 977-999
2. Գագիկ Բագրատունի, Կարսի թագավոր, 1029-1064
- 3-4. Չաքարե և Իվանե սպասալարներ, XII-XIII դարեր

## **TABLE II. KINGS, MILITARY LEADERS**

1. Smbat II, Bagratuni, 977-999
2. Gagik Bagratuni, the King of Kars, 1029-1064
- 3-4. Zakare and Ivane, military leaders XII-XIII centuries



### ՏԱԽՏԱԿ III. ԹԱԳՈՒՀԻՆԵՐ, ԱՐՔԱՅԱԴՈՒՍՏՐԵՐ

1. Սաթենիկ, Արտաշես Ա-ի կինը, Ալանաց թագավորի դուստրը, II դար, Ք.ա.
2. Աշխեն, Տրդատ Գ-ի կինը, Աշխադարի դուստրը, III-IV դարեր
3. Անծանոթ հայ թագուհի
4. Խոսրովդուխտ, «Օրիորդ հայոց», Խոսրով Ա-ի դուստրը, Տրդատ Գ-ի քույրը, III-IV դարեր

### TABLE III. QUEENS, PRINCESSES

1. Satenik, the wife of Artashes I, the daughter of the King of Alans, II century, B. C.
2. Ashkhen, the wife of Trdat the III, the daughter of Ashkhadar, III-IV century
3. Unknown Armenian queen
4. Khosrovdookht, "Miss Armenian", the daughter of Khosrov I, the sister of Trdat III, III-IV century





**ՏԱԽՏԱԿ IV. ԹԱԳՈՒՀԻՆԵՐ, ԱՐՔԱՅԱԴՈՒՍՏԻՆԵՐ**

1. Մարիոն թագուհի, Կոստանդին Բ թագավորի մայրը, XIV դար
2. Կերան կամ Կիր Աննա, թագուհի, Լևոն Բ-ի կինը, XIV դար
- 3-4. Գարանդուխտ թագուհի և Մարիամ արքայադուստր, Կարսի թագավոր Գագիկ Բագրատունու կինը և դուստրը, XI դար

**TABLE IV. QUEENS, PRINCESSES**

1. Queen Marioon, the mother of the King Constantin II, XIV century
2. Queen Keran or Kir Anna, the wife of the King Levon II, XIII century
- 3-4. Queen Garandukht and princess Mariam, the wife and the daughter of King Gagik Bagratuni of Kars, XI century



### ՏԱԽՏԱԿ V. ԱՐՔԱՅԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՉԱՎԱԿՆԵՐ

1. Լևոն, Հեթում Ա-ի որդին և գահաժառանգը, հետագայում՝ Լևոն Բ թագավոր, XIII դար
- 2-6. Լևոն Բ-ի զավակները. մեծ որդին, փոքր որդիները, Չաբել և Ռիթա դուստրերը, XIII դար
- 7-8. Վասակ արքայազոր որդիներ՝ Կոստանդինը և Հեթումը, XIII դար

### TABLE V. CHILDREN OF ROYAL FAMILY

1. Levon, crown prince and the son of Hetoom I, later known as King Levon II, XIII century
- 2-6. The children of Levon II. The oldest son, the younger sons and the daughters Zabel and Rita, XIII century
- 7-8. Kostandin and Hetoom, the sons of the king's brother Vasak, XIII century



**ՏԱԽՏԱԿ VI. ՄԱՐԶՊԱՆՆԵՐ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐ, ԻՇԽԱՆՆԵՐ**

1. Վասակ Սյունի, նախարար և մարզպան, V դար
2. Դավիթ Սահառունի, կյուրոպաղատ, VII դար
- 3-4. Սահակ և Համազասպ, Վասպուրականի իշխաններ, XIII դար

**TABLE VI. MARZPANS (RULERS OF THE REGIONS), NAKHARARS (BIG FEUDAL LORDS) AND PRINCES**

1. Vasak Syuni, nakharar and marzpan, V century
2. David Saharuni, Kyurabaghat, VII century
- 3-4. Sahak and Hamazasp, princes of Vaspurakan, VIII century



**ՏԱԽՏԱԿ VII. ՍՊԱՐԱՊԵՏՆԵՐ, ԶՈՐԱՎԱՐՆԵՐ**

1. Մուշեղ Մամիկոնյան, IV դար
2. Վարդան Մամիկոնյան, V դար
3. Ներսեհ Կամսարական, V դար
4. Գալլ Վահան, VI դար

**TABLE VII. SPARAPETS (COMMANDERS-IN-CHIEF OF THE ARMENIAN ARMY)  
AND MILITARY LEADERS**

1. Mooshegh Mamikonian, IV century
2. Vardan Mamikonian, V century
3. Nerseh Kamsarakan, V century
4. Gile Vahan (Wolf Vahan), VI century



### ՏԱԽՏԱԿ VIII. ԻՇԽԱՆՆԵՐ

1. Պոռշ, Մեծ իշխան, XIII դար
2. Բուրթել, իշխան Օրբելյան, XIII դար
3. Խուփլու Բուղա իշխան, XIII դար
4. Վասակ, իշխան Լամբրոնի, արքաներայր, XIII դար

### TABLE VIII. PRINCES (FEUDAL LORDS)

1. Prosh, Grand duke, XIII century
2. Boortel, Prince Orbelian, XIII century
3. Prince Khootlu Boogha, XIII century
4. Vasak, prince of Lambron, brother of the king, XIII century



**ՏԱԽՏԱԿ IX. ՉԻԱՎՈՐ ԻՇԽԱՆՆԵՐ**

- 1-2. Մի անծանոթ իշխան և իր թիկնապահը, XIV-XV դարեր
3. Ամիրհասան Բ. XIV դար

**TABLE IX. PRINCES ON HORSEBACK**

- 1-2. An unknown prince with his bodyguard, XIV-XV centuries
3. Amir Hasan the Second, XIV century



### ՏԱԽՏԱԿ X. ՉԻՆՎՈՐՆԵՐ

1. Նիզակավոր, I դար, Ք.ա. մինչև ուշ միջնադար
2. Աղեղնավոր կամ նետաձիգ, հին և միջին դարեր
3. Վաղրավոր, IV-V դարեր
4. Պարսավոր, հնագույն դարեր
5. Սակրավոր, Հին և Միջին դարեր
- 6-7. Սուխնավորներ
8. Սուսերավոր, I դարից մինչև ուշ միջնադար
9. Չրահավոր կամ շերտավոր, X դար
10. Չիավոր ասպետ, XII-XIII դարեր

### TABLE X. SOLDIERS

1. A lance-bearer, I century B.C. till late Middle Ages
2. An archer, ancient times and the Middle Ages
3. A soldier holding a vaghr - an iron bludgeon
4. A soldier holding a sling
5. A soldier holding a pole-axe, ancient times and Middle Ages
- 6-7. Soldiers holding bayonets
8. Soldier, holding a sword, I century till late Middle Ages
9. Armour-clad warrior, X century
10. A knight on horseback, XII-XIII centuries



### ՏԱԽՏԱԿ XI. ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

1. Գատավոր, XIV դար
2. Գատապաշտպան, XIV դար
3. Գիվանապետ, XIII դար
4. Գահիճ, X դար
- 5-6. Քուրմեր
- 7-9. Քաղաքապահներ

### TABLE XI. OFFICIALS

1. A judge, XIV century
2. A solicitor, XIV century
3. A chancellor, XIII century
4. A hangman, X century
- 5-6. Priests of pagan worship
- 7-9. City guards





**ՏԱԽՏԱԿ XII. ԲԱՐՉՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ  
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐ**

- 1-2. Սուրխաթմիշ և Բեկիխաթուն, XIV դար
- 3-4. Պարոն Բոնավոր և Տղա տիկին, XIII դար
5. Անեցի տիկին, XII-XIII դարեր
6. Մի ազնվական տիկին, XIV դար
7. Թամամխաթուն, XIV դար
8. Տիկին Սահառունի, VII դար
9. Անծանոթ իշխան, VI-VII դարեր
10. Հարուստ տիկին, XIV դար

**TABLE XII. REPRESENTATIVES OF UPPER  
CLASSES**

- 1-2. Soorkhatmish and Bekikhatoon, XIV century
- 3-4. Lord Brnavor and Lady Tgha, XIII century
5. A lady from Ani, XII-XIII century
6. A noble lady, XIV century
7. Tamamkhatoon, XIV century
8. Lady Saharooni, VII century
9. An unknown prince, VI-VII centuries
10. A rich lady, XIV century



**ՏԱԽՏԱԿ XIII. ՄԻՋԻՆ ԵՎ ԱՏՈՐԻՆ ԴԱՍԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐ**

- 1-2. Հոհան ճարտարապետ և կառուցող բանվոր, VII դար
- 3. Գրիգորիս
- 4. Այրի կին
- 5. «Իմաստունն կույս», XVII դար
- 6. Հանցավոր կին, XIX դար
- 7-8. Մատովակ և ձկնորս, XIII դար
- 9. Ծերուկ, XIII դար
- 10-11. Տղաներ, XIV և XVII դարեր
- 12-14. Ժողովրդական տիպեր, XIV դար

**TABLE XIII. REPRESENTATIVES OF MIDDLE AND LOWER CLASSES**

- 1-2. Architect Hohan and a builder, VII century
- 3. Grigores
- 4. A widow
- 5. "A wise virgin", XVII century
- 6. A guilty woman, XIX century
- 7-8. A cupbearer and a fisherman, XIII century
- 9. An old man, XIII century
- 10-11. Boys, XIV and XVII centuries
- 12-14. Folk types, XIV century



**ՏԱԽՏԱԿ XIV. ՇԻՆԱԿԱՆՆԵՐ, ՌԱՄԻԿՆԵՐ**

1. Ծերուկ, XVI դար
2. Ծերուկ, XI դար
- 3-4. Մի կին, երկու դիրքով, XIV դար
5. Հովիվ, XIV դար
6. Գզրար, XVIII-XIX դարեր
- 7-8. Հովիվներ, XIV դար
9. Կույր երիտասարդ, XIV դար
- 10-11. Սպասավորներ, XIII դար

**TABLE XIV. PEASANTS, LABOURERS**

1. An old man, XVII century
2. An old man, XI century
- 3-4. A woman, in two positions, XIV century
5. A sheperd, XIV century
6. Gzrar, XVIII-XIX centuries
- 7-8. Shepherds, XIV century
9. A blind young man, XIV century
- 10-11. Servants, XIII century



**ՏԱԽՏԱԿ XV. ԲԺԻՇԿՆԵՐ**

- 1-2. Միջնադարի մեզ անհայտ հայ բժիշկներ
- 3. Գաղերիոս
- 4. Բագարատ
- 5. Մխիթար Հերացի, XVIII դար

**TABLE XV. MEDICIANS**

- 1-2. Unidentified medieval medicians
- 3. Gagherios
- 4. Bagarat
- 5. Mkhitar Heratsi, VIII century



**ՏԱԽՏԱԿ XVI. ՆԿԱՐԻՉՆԵՐ**

1. Սարգիս Պիծակ, XIV դար
2. Ծերուն Ծաղկող, XIV դար
3. Ավագ դպիր, XIV դար
4. Մանվել, XIII դար

**TABLE XVI . MINIATURISTS**

- 1.Sarkis Pitsak, XIV century
- 2.Tseroon Tsaghkogh, XIV century
- 3.Avag dpir (scribe), XIV century
- 4.Manvel, XIII century



**ՏԱԽՏԱԿ XVII. ԳՈՒՍԱՆՆԵՐ, ՎԱՐՉԱԿՆԵՐ, TABLE XVII. BARDS, JESTERS, CLOWNS  
ԾԱՂՐԱԾՈՒՆԵՐ**

1. Բարբոտը նվագող գուսան, XVI դար
- 2-3. Կատակագուսաններ
4. Դափ նվագող և երգող գուսան
5. Փողիար կատակագուսան, XVII դար
6. Դափ նվագող և պարող գուսան
- 7-8. Վարձակներ
- 9-10. Ծաղրածուներ, XIV դար

1. Bard Barboot, XVI century
- 2-3. Joker bards
4. A bard singing and playing a tambourine
5. A trumpet playing joker bard, XVII century
6. A bard playing a tambourine and dancing
- 7-8. Jesters
- 9-10. Clowns, XIV century



**ՏԱԽՏԱԿ XVIII. ԲԱՐՉՐԱՍՏԻՃԱՆ ԵԿԵՂԵՅԱԿԱՆՆԵՐ, XVIII-XX ԳԱՐԵՐ**

1. Կաթողիկոս, սովորական հագուստով
2. Եպիսկոպոս, սովորական հագուստով
3. Կաթողիկոս, ծիսական հանդերձանքով

**TABLE XVIII. CHURCHMEN OF HIGH RANK, XVIII-XX CENTURIES**

1. Catholicos, in common costume
2. Bishop, in common clothes
3. Catholicos in ceremonial clothing



**ՏԵՄԵՆԿ XIX. ՅԱԾՐԱՍՏԻՃԱՆ ԵԿԵՂԵՅԱԿԱՆՆԵՐ**

1. Հարրապետ
2. Քահանա
3. Պարկավագ, եկեղեցում պաշտոնակատարության ժամանակ
4. Պարկավագուհի, կուսանաց վանքերում մայրապետ

**TABLE XIX. CHURCHMEN OF LOW RANK**

1. Doctor, in common clothes
2. A Priest
3. Deacon during the divine service
4. Deaconess, Mother-Superior of a nunnery





**ՏԱԽՏԱԿ XX. ԱԶՆՎԱԿԱՆՆԵՐ,  
VI-XVII ԴԱՐԵՐ**

1. Ազնվական Ստորին Հայոց (Կիլիկիա)
2. Պատվավոր հայ
3. Կին Ստորին Հայոց (Կիլիկիա)
4. Հայ պարկեշտուհի
5. Ազնվական կամ վաճառական հայ
6. Հայ միանձնուհի
- 7-9. Ազնվական տիպեր

**TABLE XX. NOBLES,  
VI-XVII CENTURIES**

1. An Armenian noble (Cilicia)
2. A honourable Armenian
3. An Armenian woman (Cilicia)
4. A decent Armenian girl
5. An Armenian noble or merchant
6. An Armenian nun
- 7-9. Three Armenian Nobles



### ՏԻՆՏԱԿ XXI. ԽՈՋԱՆԵՐ

1. Խոջա վաճառատնապետ, XVII դար
2. Խոջա Նահապետ, որդի Աբուլեթ Խոջա Գյուլնազարի, խոշոր առևտրական, XVII դար
- 3-4. Գիրսք աղա. որդի Հակոբա. Նոր Ջուղայի նշանավոր վաճառական, XVII դար

### TABLE XXI. MERCHANTS

1. The head of the merchants, XVII century
2. Khoja Nahapet, the son of Khoja Aboolet Gulnazar, wholesale merchant, XVII century
- 3-4. Girak agha (lord), son of Hakob, a famous merchant of New Jugha, XVII century



**ՏԱԽՏԱԿ XXII. ՆՇԱՆԱՎՈՐ ԱՇՈՒՂՆԵՐ**

1. Նաղաշ Հովնաթան, 1661-1722
2. Մայաթ-Նովա, 1712-1795
3. Շիրին, 1827-1856
4. Ջիվանի, 1846-1909

**TABLE XXII. FAMOUS ASHOUGHS (ARMENIAN BARDS)**

1. Naghash Hovnatan, 1661-1722
2. Sayat-Nova, 1712-1795
3. Shirin, 1827-1856
4. Jivani, 1846-1909



ՏՄԽՏԱԿ XXIII.  
ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐ

TABLE XXIII.  
ARMENIAN VOLUNTEERS

# ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ ETHNOGRAPHICAL SECTION

---



## ՏԱԽՏԱԿ XXIV

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՏՂԱՄԱՐԿԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՏԱՐԱԶՆԵՐ

## TABLE XXIV

COSTUMES OF MEN AND WOMEN OF YEREVAN CITY



ՏԵԽՆԱԿ XXV

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇԻ ՏՂԱՄԱՐԳԿԱՆՅ ԵՎ ԿԱՆԱՆՅ ՏԱՐԱԶՆԵՐ

TABLE XXV

COSTUMES OF MEN AND WOMEN OF ARARAT VALLEY



**ՏԱԽՏԱԿ XXVI. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՏԱՐԱԶՆԵՐ**

1. Տղամարդ արխալուղով և չուխայով
2. Միջին տարիքի կին մանիշակագույն խրխա-ջուրբայով և գոգնոցով
3. Երիտասարդ կին կարմիր խրխա-ջուրբայով, գոգնոցով և քողով
4. Երիտասարդ տղամարդ չուխայով, արխալուղով և XIX դարի վերջի, XX դարի սկզբներին հատուկ գլխարկով

**TABLE XXVI. COSTUMES OF ALEXANDRAPOL**

1. A man in arkhaloogh and chookha (kinds of clothes)
2. A middle aged woman in violet khrkha-jooba (dress) and apron
3. A young woman in red khrkha-jooba, apron and veil
4. A young man in chookha, arkhaloogh and a hat typical for the end of XIX and the beginning of XX centuries



**ՏԱԽՏԱԿ XXVII. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՏԱՐԱՉՆԵՐ**

1. Միջին տարիքի կին
2. Միջին տարիքի տղամարդ
3. Երիտասարդ կին
4. Երիտասարդ տղամարդ

**TABLE XXVII. COSTUMES OF ALEXANDRAPOL**

1. A middle-aged woman in khrkha-jooba.
2. A middle-aged man in arkhaloogh and chookha.
3. A young woman in red khrkha-jooba and apron.
4. A young man in loti costume





**ՏԱԽՏԱԿ XXVIII**  
**ՊԱՐՈՂ ՀԱՐՍՆԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ ՆՈՐԱՏԻ ՀԱՐՍՆԵՐԻՆ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԶՈՎ**

**TABLE XXVIII**  
**DANCING BRIDES IN ALEXANDRAPOL IN TYPICAL COSTUMES**



**ՏԱԽՏԱԿ XXIX. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՄԱՆՐ ԱՌԵՎՏՐԱԿԱՆՆԵՐ**

1. Մխչոնց Նիկո
2. Պոլոզ Մուկուչ
3. Ցիտրո
4. Չուչխոլ

**TABLE XXIX. SMALL TRADERS OF ALEXANDRAPOL**

1. Mkhchonts Niko
2. The famous joker Poloz Mookuch
3. Tsitro
4. Choochkhoel



**ՏԱԽՏԱԿ XXX. ՄԱՆՐԱՎԱՃԱՌ-ԽԱՆՈՒԹՊԱՆՆԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ**

1. Խանութպան՝ եվրոպական տարազով և աշխատանքային գոգնոցով
2. Խանութպան՝ Ալեքսպոլի հին տարազով և XIX դարի վերջերին, XX դարի սկզբներին հատուկ գլխարկով
3. Մանրավաճառ՝ հին ու նոր տարազների խառնուրդով
4. Փերեզակ՝ շրջող մանրավաճառ՝ խառն տարազով

**TABLE XXX. SMALL TRADERS IN ALEXANDRAPOL**

1. A shopkeeper in European costume and working apron
2. A shopkeeper in the old costume of Alexandrapol, and hat, typical for the end of XIX century and the beginning of XX century.
3. A shopkeeper in the mixture of old and new costumes of a small trader.
4. A hawker in mixtured costumes.



**ՏԱԽՏԱԿ XXXI. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐ ԽԱՌՆ ՏԱՐԱԶՆԵՐՈՎ**

1. Արհեստավոր՝ քաղաքային վերարկուով և երկարաճիտ կոշիկներով
2. Արհեստավոր՝ ծերունի արխալուղով, լոթու անդրավարտիքով և հին ոտնամաններով
3. Սրճարանի սպասավոր՝ լոթու հագուստով և ոտնամաններով
4. Ծեր արհեստավոր՝ հին և լոթիներին հատուկ տարազների խառնուրդով

**TABLE XXXI. WORKERS OF ALEXANDRAPOL IN DIFFERENT COSTUMES**

1. An artisan in a city coat and high-boots.
2. An old artisan in arkhaloogh, trousers of loti and old shoes
3. A waiter of a cafe in the clothes of loti and shoes
4. An old artisan in the mixture of old style clothes and clothes typical to loties



**ՏԱԽՏԱԿ XXXII. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՄԱՆՐ ՄՍԱՎԱՃԱՌՆԵՐ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ**

1. Մսավաճառ արխալուղով, լոթու անդրավարտիքով և ոտնամաններով շրջիկ
2. Մսավաճառ երկար արխալուղով և լոթու անդրավարտիքով ու կոշիկներով
3. Քյուղացի թռչնավաճառ հին սարագով

**TABLE XXXII. BUTCHERS OF ALEXANDRAPOL AT THE BEGINNING OF XX CENTURY**

1. A butcher in arkhaloogh, trousers of loti and shoes
2. A butcher in a long arkhaloogh, trousers of loti and shoes
3. A peasant bird seller in an old style costume



**ՏԱԽՏԱԿ XXXIII**

**ԿԱՐԻՈՒ ՀԱՅԵՐԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՅ ԵՎ ԿԱՆԱՆՅ ՏԱՐԱԶՆԵՐ**

**TABLE XXXIII**

**COSTUMES OF MEN AND WOMEN FROM KARIN**



ՏԱԽՏԱԿ XXXIV

ԹԻՖԼԻՍԻ ԿԱՆԱՆՅ ԵՎ ՏՂԱՍԱՐԴԿԱՆՅ ՏԱՐԱԶՆԵՐ

TABLE XXXIV

COSTUMES OF MEN AND WOMEN OF TIFLIS



**ՏԱԽՏԱԿ XXXV. XIX ԴԱՐԻ ՎԵՐՉԵՐԻ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿՉԲՆԵՐԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԿԱՆԱՑԻ ՏԱՐԱԶՆԵՐ**

- 1. 3. Կանայք՝ Գողթան գավառի կանացի գլխի հարդարանքներով և Նուխու բաճկոններով ու շրջագգեսաներով
- 2. Կին՝ Արարատյան շրջագգեստով, բաճկոնով, գլխի հարդարանքով ու սանրվածքով և Գողթան գավառի կնոջ կրծկալի տարբերակով
- 4-5. Սյունիք-Արցախյան կանացի տարազներ

**TABLE XXXV. EAST ARMENIAN FEMALE COSTUMES AT THE END OF XIX CENTURY AND THE BEGINNING OF XX CENTURY**

- 1-3. Women with the head decorations of Goghtan district and Nookhi coats and dresses
- 2. A woman in a dress, coat, head decoration and hair-out typical of Ararat Valley
- 4-5. Costumes of women in Syunik and Artsakh





**ՏԱԽՏԱԿ XXXVI. XIX ԴԱՐԻ ՎԵՐՁԵՐԻ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ  
ՏԱՐԱԶՆԵՐ**

- 1-2. Գողթնեցի տարեց տղամարդու և միջին տարիքի կնոջ տարազներ
3. Վարանդացի կնոջ տարազ
4. Չանգեզուրցի տղամարդու տարազ

**TABLE XXXVI. EAST ARMENIAN COSTUMES AT THE END OF XIX CENTURY AND THE  
BEGINNING OF XX CENTURY**

- 1-2. Costumes of an old man and a middle-aged woman of Goght
3. Costume of a woman of Varanda
4. Costume of a man of Zangezoor



**ՏԱԽՏԱԿ XXXVII. XIX ԴԱՐԻ ՎԵՐՁԵՐԻ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻ ԿԱՆԱՅԻ ՏԱՐԱԶՆԵՐ**

1. Ալեքսանդրապոլցի տարեց կնոջ տարազ
- 2, 4. Թավրիզի հայ կանացի տարազներ
3. Գողթան գավառի Յղնա գյուղի կնոջ տարազ
5. Բաֆիու կինը՝ տիկին Աննան Սալմաստի տարազով

**TABLE XXXVII. FEMALE COSTUMES AT THE END OF XIX CENTURY AND THE BEGINNING OF XX CENTURY**

1. Costume of an old woman of Alexandrapol
- 2,4. Costumes of women of Tavriz
3. Costume of woman of Tshghna village of Goghtan District
5. Raffi's wife Anna in a costume of Salmast



**ՏԱԽՏԱԿ XXXVIII. XIX ԴԱՐԻ ՎԵՐՁԵՐԻ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶՆԵՐ**

1. Տրապիզոնցի կնոջ տարազ
- 2,4. Վասպուրականցի տղամարդկանց տարազներ
3. Մշեցի օրիորդի տարազ

**TABLE XXXVIII. WEST ARMENIAN COSTUMES AT THE END OF XIX CENTURY AND THE BEGINNING OF XX CENTURY**

1. Costume of a woman of Trabizon
- 2,4. Costumes of men of Vaspoorakan
3. Costume of a girl of Moosh



**ՏԱԽՏԱԿ XXXIX**

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱՏԱԽ ԳԱՎԱՌԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՅ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՈՂԱԿԱՆ ՏԱՐԱԶՆԵՐ, XIX ԴԱՐԻ ՎԵՐՁԵՐ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐ**

**TABLE XXXIX**

**FESTIVE COSTUME OF OLD MEN AND YOUNG MEN OF WEST ARMENIAN DISTRICT SHATAKH, AT THE END OF XIX CENTURY AND THE BEGINNING OF XX CENTURY**



**ՏԱԽՏԱԿ XL. XIX ԴԱՐԻ ՎԵՐՁԵՐԻ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿՁԲՆԵՐԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՆԱՅԻ ՏԱՐԱԶՆԵՐ**

1. Տրապիզոնցի երիտասարդ կնոջ տարազ
- 2-3. Սեբաստացի երիտասարդ կնոջ տարազներ
4. Տրապիզոնցի կնոջ տարազ

**TABLE XL. COSTUMES OF WEST ARMENIAN WOMEN AT THE END OF XIX CENTURY AND THE BEGINNING OF XX CENTURY**

1. Costume of a young woman of Trabizon whose apron is of Ararat Valley
- 2-3. Costumes of young women of Sebastia. The second woman's apron is of Ararat Valley
4. Costume of a woman of Trabizon



**ՏԱԽՏԱԿ XLI. XIX ԳԱՐԻ ՎԵՐՁԵՐԻ ԵՎ XX ԳԱՐԻ ՍԿՁԲՆԵՐԻ  
ԱՐԵՎՄՏԱՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱՁՆԵՐ**

1. Մշեցի բարեկեցիկ ընտանիքի կայուհի
2. Վասպուրականցի գեղջկուհի
3. Մշեցի
4. Մշեցի՝ քաղաքային տարազով

**TABLE XLI. WEST ARMENIAN COSTUMES AT THE END OF XIX CENTURY AND  
THE BEGINNING OF XX CENTURY**

1. An Armenian woman from a well-to-do family of Moosh
2. A peasant woman of Vaspoorakan
3. A man of Moosh
4. A man of Moosh in a city costume.



**ՏԱԽՏԱԿ XLII. XIX ԴԱՐԻ ՎԵՐՁԵՐԻ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿՁԲՆԵՐԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԿԱԿԱՆ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՅ ՏԱՐԱԶՆԵՐ**

- 1-2. Չեյթունցի երիտասարդներ
- 3-4. Սասունցիներ՝ իրենց տոնակաճ տարազներով

**TABLE XLII. COSTUME OF THE WEST ARMENIAN MEN AT THE END OF XIX CENTURY AND THE BEGINNING OF XX CENTURY**

- 1-2. Young men of Zeitoon
- 3-4. Young men of Sassoon in festive costumes



**ՏԱԽՏԱԿ XLIII. XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿՁԲՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՎԱՅՐԵՐԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՑԻ ՏԱՐԱԶՆԵՐ**

- 1-2. Այունիք-Արցախյան տղամարդկանց տարազներ
- 3. Մարաղացի կնոջ տարազ
- 4. Սալմաստեցի կնոջ տարազ

**TABLE XLIII. COSTUMES OF MEN AND WOMEN OF DIFFERENT ARMENIAN PLACES AT THE END OF XIX CENTURY AND THE BEGINNING OF XX CENTURY**

- 1-2. Costumes of men of Syoonik and Artsakh
- 3. Costume of a woman of Maragha
- 4. Costume of a woman of Salmast





**ՏԱԽՏԱԿ XLIV**

**XIX ԴԱՐԻ ՎԵՐՁԵՐԻ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻ ՍԱՍՈՒՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՎ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ՏՈՆԱԿԱՆ ՏԱՐԱԶՆԵՐ**

**TABLE XLIV**

**FESTIVE COSTUMES OF YOUNG MEN AND GIRLS OF SASOON AT THE END OF XIX CENTURY AND THE BEGINNING OF XX CENTURY**



**ՏԱԽՏԱԿ XLV**

**XIX ԴԱՐԻ ՎԵՐՁԵՐԻ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿՉԲՆԵՐԻ ՍԵՔԱՍՏԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ, ԱՂՋԿԱ ԵՎ ՀԱՐՍԻ ՏԱՐԱՉՆԵՐ**

**TABLE XLV**

**COSTUMES OF A YOUNG MAN, GIRL AND BRIDE OF THE WEST ARMENIAN DISTRICT OF SEBASTIA AT THE END OF XIX CENTURY AND THE BEGINNING OF XX CENTURY**



**ՏԱԽՏԱԿ XLVI. ԱՇՈՒՂՆԵՐ**

1. Շրջիկ աշուղ
2. Քաղաքային աշուղ
3. Կիլիկիացի աշուղ
4. Գյուղական աշուղ, հեքիաթասաց

**TABLE XLVI. ASHOUGHS**

1. A travelling ashough
2. A city ashough
3. An ashough of Cilicia
4. A village ashough, tale-teller



**ՏԱԽՏԱԿ XLVII. ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԵՐԱԺԻՇՏՆԵՐ**

- 1-4. Մազանդարներ (Թիֆլիս)
- 5-7. Մազանդարներ (Ալեքսանդրապոլ)
- 8-10. Չուռնաչիներ, դուդուկ նվագելիս (Ալեքսանդրապոլ)
- 11-13. Չուռնաչիներ (Լորի)

**TABLE XLVII. FOLK MUSICIANS**

- 1-4. Musicians (Tiflis)
- 5-7. Musicians (Alexandrapol)
- 8-10. Doudouk players (Alexandrapol)
- 11-13. Zourna players (Lori)

# ՀԱՎԵԼՎԱԾ

## ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

### APPENDIX

#### FAMOUS ARMENIANS ABROAD



#### ՏԱԽՏԱԿ XLVIII. ՀԱՅԱԶԳԻ ԿԱՅՍՐԵՐ ԲՅՈՒԶԱՆԿԻԱՅՈՒՄ

1. Վասիլ (Բազիլիոս) Ա Մակեդոնացի, 867-886
2. Լևոն Չ, փիլիսոփա, 886-912
3. Ալեքսանդր, 912-913
- 4-5. Կոստանդին Է Պորփյուրոզեն և Հեղինե, 913-919
6. Ռոմանոս Ա, Լեկապեն, 919-944
7. Ռոմանոս Բ, 959-963
8. Հոհան Չմիշկ, 969-976
- 9-10. Վասիլ (Բազիլիոս) Բ Բուլղարասպան, 976-1025 և քայր Աննա, ռուսաց Վլադիմիրի իշխանի կինը

#### TABLE XLVIII. ARMENIAN EMPERORS IN BYZANTIUM

1. Vasil (Bazilios) I Macedonian, 867-886
2. Levon VI philosopher 886-912
3. Alexander, 912-913
- 4-5. Kostandin VII Porphyrogen and Heghine, 913-919
6. Romanos I, Lekapen, 919-944
7. Romanos II, 959-963
8. Hohan Chmishk, 969-976
- 9-10. Vasil (Bazilios) II, Boolgharaspan (killer of Bulgarians), 976-1025 and his sister Anna, the wife of Russian prince Vladimir



**ՏԱԽՏԱԿ XLIX. ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅ  
ԳԵՆԵՐԱԼՆԵՐ ՌՈՒՍԱՍԱՆՈՒՄ**

1. Իշխան Բարսեղ Բեհբության, 1791-1858
2. Իշխան Մովսես Արղուսթյան-Երկայնաբազուկ, 1796-1855
3. Կոմս Միքայել Լորիս-Մելիքյան, 1825-1888
4. Հովհաննես Դավթյան-Լազարյանց, 1820-1879
5. Արշակ Հարությունյան - Տեր-Ղուկասյանց, 1819-1881
6. Հակոբ Ալխազյան, 1826-1896
7. Բեհբուդ Մարտիրոսյան - Շելկովնիկյանց, 1837-1879

**TABLE XLIX. FAMOUS ARMENIAN  
GENERALS IN RUSSIA**

1. Prince Barsegh Behbootian, 1791-1858
2. Prince Movses Arghootian-Yerkaynabazook (long-armed), 1798-1855
3. Count Michael Loris-Melikian, 1825-1888
4. Hovhannes Davtian - Lazariants, 1820-1879
5. Arshak Haroutyunian - Ter-Ghookasians, 1819-1881
6. Hakop Alkhazian, 1826-1896
7. Behhood Martirossian - Shelkovnikiants, 1839-1879



**ՏԱԽՏԱԿ Լ. ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐ  
ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼՍՈՒՄ**

1. Ֆիզիկոս Պողոս Պատվելի Մելիքշահյան, 1788-1855
2. Իսկուհի Տիուզ, բարձր ընտանիքի տիկին
3. Գրիգոր Աղաթոն, ազգային հասարակական գործիչ
4. Գրիգոր Չելեպի Տյուզ, պետական բարձր պաշտոնյա, XVIII-XIX դարեր
5. Տիկին Պայծառ Ֆասուլաճյան, դերասանուհի, 1842-1911
6. Գարեգին Պեշկյոտորյան, բանաստեղծ, 1867-1891
7. Պիստոս-Արաքսյա, բեմում՝ 1867-1868, մահացած 1882
8. Արամ Անտոնյան, գրող-լրագրող, 1881-1954

**TABLE L. ARMENIAN FIGURES IN  
CONSTANTINOPLE**

1. Physicist Poghos reverend Melikshahian, 1788-1855
2. Iskoohi Tyuz, a lady of an upper class family
3. Grigor Aghaton, national public figure
4. Mr. Grigor Chelepi Tyuz, a state official, XVIII-XIX centuries
5. Mrs. Paitsar Tasoolachian, actress, 1842-1911
6. Garegin Peshkyotoorian, poet, 1867-1891
7. Pistos-Araxya (on the stage, 1867-1868), died in 1882.
8. Aram Antonian, writer, journaliist, 1881-1954



**ՏԱԽՏԱԿ ԼԼ. ՀԱՅ ՔԱԴԱՔԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ**

**TABLE LI. ARMENIAN POLITICAL FIGURES IN TURKEY**

1. Մանուկ պեյ Միրզայանց, 1775-1817
2. Միքայել Չելեպի Տյուզ, 1724-1783
3. Գաբրիել Նորատունկյան, 1852-1901
4. Ոսկան էֆ. Մարտիկյան, 1868-1939
5. Արթին փաշա Գազազյան (մահացած 1913-ին)
6. Հարություն Պեզճյան-Գազազ-Ամիրա, 1771-1834
7. Պողոս Ա Շաշիշյան, 1744-1815
8. Սարգիս պեյ Պալյան, 1835-1899

1. Manook pei Mirzayants, 1775-1817
2. Michael Chelebi Tyuz, 1721-1783
3. Gabriel Noratoonkian, 1852-1901
4. Voskan Martikian, 1868-1939
5. Artin pasha Gazazian (died in 1913)
6. Haroutyoun Pezchian-Gazaz amira, 1771-1834
7. Poghos A Shashishian, 1744-1815
8. Sarkis pei Palian, 1835-1899





**ՏԱԽՏԱԿ LII. ՆՇԱՆԱՎՈՐ ՀՆԴԿԱՀԱՅԵՐ**

1. Շահամիր Սուլթանում Շահամիրյան, XVIII դար
2. Հովհաննես Բաբիկյան, որդի Ռաֆայելի
3. Սարգիս Ծատուրի Աղայվալյանց, XIX դար
4. Տիկին Լազարյան, XIX դար
5. Էդվարդ Ռաֆայելի Ղարումյան, XVIII դար
6. Շահամիր Սուլթանումի որդին

**TABLE LII. FAMOUS ARMENIANS IN INDIA**

1. Shahamir Sultanum Shahamirian, XVIII century
2. Hovhannes Babikian, son of Raphael
3. Sarkis Tsatoor Aghaivaliants
4. Mrs. Lazarian, XIX century
5. Edvard Raphael Gharoomian, XVIII century
6. Son of Shahamir Sultanum



ՏԱԽՏԱԿ LIII  
ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ՀՈԼԱՆԴԻԱՅՈՒՄ

TABLE LIII  
ARMENIAN MERCHANTS IN HOLLAND



**ՏԱԽՏԱԿ LIV. ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՅԼՈՒՐ**

1. Հայ խոշոր կալվածատեր, XIX դարի սկզբին
2. Հայ կալվածատեր կին, XIX դարի սկզբին
3. Հայ խաթուն, XIX դարի սկզբին
4. Հայ վաճառական, XVIII դարում

**TABLE LIV. FAMOUS ARMENIANS IN POLAND AND ELSEWHERE**

1. Armenian landlord in the city of Chernovits, XIX century
2. Armenian landlady, Suchava city
3. Armenian khatoon (lady), XIX century
4. Armenian merchant, XVIII century. Lehmburg (Lvov) city



**ՏԱԽՏԱԿ LV. ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ**

1. Պողոս պեյ Յուսուֆյան, 1775-1844
2. Արթին պեյ Չրաքյան, 1800-1859
3. Նուպար փաշա, 1825-1899
4. Արիստակես Ալթուն Տյուրի
5. Տիգրան փաշա Տապրո, 1846-1904
6. Աբրահամ փաշա Բարթող
7. Կարապետ աղա Գալուստ

**TABLE LV. ARMENIAN POLITICAL  
FIGURES IN EGYPT**

- 1.Poghos pei Yusufian, 1775-1844
- 2.Artin pei Chrakian, 1800-1859
- 3.Noopar pasha, 1825-1889
- 4.Aristakes Altoon Tyuri
- 5.Tigran pasha Tapro, 1846-1904
- 6.Abraham pasha Bartogh
- 7.Karapet agha Galoost



**ՏԱԽՏԱԿ LVI. ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԻՐԱՆՈՒՄ**

1. Միրզա Մելքում Խան, 1832-1908
2. Չհանգիր խան Ենիկոլոպ Մամիկոնյան, 18.-1891
3. Նարիման խան, 1736-1906
4. Հովհաննես խան Մասեհյան, 1868-1932

**TABLE LVI. ARMENIAN POLITICAL FIGURES IN IRAN**

1. Mirza Melkoom khan, 1832-1908
2. Jhangir khan Yenikolop Mamikonian, 18.-1891
3. Nariman khan, 1736-1906
4. Hovhannes khan Maschian, 1868-1932



**ՏԱԽՏԱԿ LVII. ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ**

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ**

1. Ներսես Ե կաթողիկոս Աշտարակեցի, պաշտոնավարման թվականներն են՝ 1843-1859
2. Գևորգ Գ կաթողիկոս Կոստանդնուպոլսեցի, 1867-1882
3. Մկրտիչ Խրիմյան Հայրիկ, պատրիարք՝ 1869-1873 և կաթողիկոս՝ 1892-1907
4. Ներսես արքեպ. Վարժապետյան, պատրիարք Կ.Պոլսի, 1874-1884
5. Մատթեոս Բ Իզմիրլյան կաթողիկոս, 1908-1909
6. Մաղաթիա արքեպ. Օրմանյան, պատրիարք Կ.Պոլսի, 1879-1918

**TABLE LVII. FAMOUS ARMENIAN**

**CLERGYMEN**

1. Catholicos Nerses V, Ashtaraketsi, 1843-1859
2. Catholicos Gevorg IV of Constantinople, 1867-1882
3. Mkrtych Khrimian, Catholicos, 1892-1907
4. Nerses archbishop Varzhapetian, patriarch of Constantinople, 1874-1884
5. Matheos II Izmirlian, Catholicos, 1908-1909
6. Archbishop Maghakia Ormanian, patriarch of Constantinople, 1879-1913



**ՏԱԽՏԱԿ LVIII. ՆՇԱՆԱՎՈՐ ՄԻԻԹԱՐՅԱՆՆԵՐ**

1. Միքայել վարդապետ Չամչյան, 1738-1823
2. Մխիթար վարդապետ Սեբաստացի, 1676-1749
3. Մկրտիչ վարդապետ Ավգերյան, 1762-1854
4. Արսեն վարդապետ Բագրատունի, 1790-1866
5. Դևոնդ վարդապետ Ալիշան, 1820-1901
6. Արսեն Արքեպիսկոպոս Այտընյան, 1825-1902

**TABLE LVIII. FAMOUS MKHITARIANS**

1. Dr. Michael Chamchian, 1738-1823
2. Dr. Mkhitar Sebastatsi, 1676-1749
3. Dr. Mkrtich Avgerian, 1762-1854
4. Dr. Arsen Bagratooni, 1790-1866
5. Dr. Ghevond Alishan, 1820-1901
6. Arsen archbishop Aytinian, 1825-1902



**ՏԱԽՏԱԿ LIX. Ս. ՀՈՒՓՍԻՄԵ ԿՈՒՅՍԻ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՏԿԵՐՈՒՄՆԵՐԸ**

1. Իտալացի անծանոթ նկարիչ, գծանկար
2. Սիմոն Նահապետյան, գծանկար
3. Վարդգես Սուրենյանց, գծանկար
4. Եղիշե Թադևոսյան, յուղանկար

**TABLE LIX. SOME PICTURINGS OF THE VIRGIN ST. HRIPSIME**

1. A drawing of an unknown Italian artist
2. Simon Nahapetian, drawing
3. Vardges Soorenians, drawing
4. Yeghishe Tadevosian, oil painting



ԲԱՑԱՏՐԱԳՐԵՐ  
EXPLANATORY NOTES



# ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱԺԻՆ

## ՏԱԽՏԱԿ I

### ԹԱԳԱՎՈՐՆԵՐ

**1. Տիգրան Բ Մեծ, 95-55 Ք.ա.:** Տիգրան Մեծից, ինչպես հայտնի է, մինչև մեր ժամանակները հասել է բազմաթիվ ոսկե, արծաթե և պղնձե դրամներ: Գրանցից ավելի լավ պահպանված և գեղարվեստորեն ավելի արժեքավոր է այն մեծ արծաթյա դրամը (Բրիտանական թանգարան), որ առաջին անգամ իր «Միիրդատ Եվպատոր» աշխատության մեջ հրատարակել է Թ. Ռայնախը (Փարիզ, 1870): Այնուհետև այդ դրամն իր լուսանկար կլիշեով տպագրվել է շատ ուրիշ աշխատությունների մեջ մինչև Ատրպետ («Տիգրան Մեծի դրամները», ԱՀ. XXI, էջ 204), Լեո («Հայոց պատմություն», Հ.Ա. Թիֆլիս, 1917), Հ. Մանանդյան («Տիգրան Բ և Հռոմը», Եր., 1940, էջ 104): Վենետիկի Մխիթարյաններն այդ դրամապատկերը նկարչականի վերածելով ստացել են Տիգրանի կիսանդրին, որ նույնպես տպագրված է մի քանի հրատարակությունների մեջ: Սույն պլանում կիսանդրին հասցվել է ամբողջական պատկերի, հիմք ունենալով այն տեղեկությունները, որ տվել են հռոմեական աղբյուրները և որոնք իրենց աշխատությունների մեջ հիշատակում են Ս.Մ. Գարաշյանը («Քննական պատմություն հայոց», Թիֆլիս, 1895), Լեոն (ն.տ., էջ 401) և ուրիշներ:

**2. Լևոն Բ, Կիլիկիայի թագավոր, 1186-1219:** Վերցրել ենք Ալիշանի «Սիսուան»-ից. Լևոնի գունավոր դիմանկարը տեղավորված է մի հատուկ շրջանակի մեջտեղում, իր շուրջն ունենալով առանձին շրջանակների մեջ ժամանակի օտար պետական և եկեղացական այն անձնավորություններին, որոնք այս կամ այն կերպ առնչություն են ունեցել հայոց թագավորի թագադրմանը: Լևոնի կիսանդրի-դիմանկարը մենք վերածել ենք ամբողջական ֆիգուրի (տե՛ս Հ. Ղևոնդյան Վ.Մ. Ալիշան, Սիսուան, համագրություն Հայկական Կիլիկիո և Լևոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 480-481):

**3. Լևոն Ե, Կիլիկիայի թագավոր, 1320-1349:** Վենետիկի Մխիթարյան մատենադարանում գտնվող 1331 թվին գրված և մանրանկարիչ Սարգիս Պիծակի նկարազարդած «Անսիզք Անտիոքա»-ի մի օրինակում (ծեռագիր 107) մի ամբողջական էջի վրա պատկերված է Լևոն Ե-ի դատաստանը: Թագավորը բարձր գահի վրա նստած է ծալապատիկ, ուշադիր լինելով ներքևում տեղի ունեցող մի հանցավոր կնոջ դատավարության ընթացքին: Այնտեղ են դատավորները՝ նստած և դատապարտվածը՝ կանգնած: Պիծակի այդ նկարի գունավոր պատճենը տպագրված է Ալիշանի «Սիսուանի» մեջ, որտեղից մենք վերցրել ենք՝ կանգնեցնելով Լևոնի պատկերը:

## ՏԱԽՏԱԿ II

### ԹԱԳԱՎՈՐՆԵՐ, ՍՊԱՍԱԼԱՐՆԵՐ

**1. Սմբատ Բ Բագրատունի, 977-999:** Հաղպատի Սուրբ Նշան եկեղեցու արևելյան պատին հազգված է մի խոշոր բարձրաքանդակ, որ ներկայացնում է Սմբատ Բ և Գուրգեն (Կյուրիկե) թագավորներին՝ մի-

մյանց դեմ կանգնած և երկուսով բռնած եկեղեցու մանրակերտը: Նման մի քանդակապատկեր էլ կա Մանահինի Ամենափրկիչ եկեղեցու արևելյան պատին: Պատկերի վրա վերևում գրված է Կյուրիկե թագավոր, Սմբատ թագավոր: Հաղպատի և Սանահինի պատկերների մեջ թագավորների հագուստները տարբեր են: Առաջինի մեջ պատկերները ծանր են, կոնստրուկտիվ, հագած են տաք վերարկուներ և Սմբատի գլխին կա չալմայածև գլխանոց նման Գագիկ Ա-ի Անիի արձանին, մինչդեռ երկրորդի հագուստներն ավելի թեթև են, զարմանալի և ավելի ազգային: Սմբատին Սանահինի հարթապատկերից վերածել ենք նկարչականի և տվել համապատասխան գույներ:

*Ծանոթ.* - Բանասիրության մեջ կարծիքներ են հայտնվել, որ Հաղպատի և Սանահինի քանդակապատկերների թագավորները նույն անձնավորությունները չեն (Brosset M. "Ruines d' Ani" S-Pb, 1856, Հ. Գևորգ Մովսեսյան «Լռոիի Կյուրիկյան թագավորության պատմությունը», Վիեննա, 1923թ) և ուրեմն, Սանահինի Սմբատը ոչ թե տիեզերակալն է, այլ Դավիթ Անհաղթի եղբայր Սմբատը և Կյուրիկեն՝ Անհաղթի որդին (XI դար):

**2. Գագիկ Բագրատունի, Կարսի թագավոր, 1029-1064:** Երուսաղեմի հայոց վանքի մատենադարանում գտնվում է այս թագավորի պատվերով գրած և բազմաթիվ նկարներով զարդարած մի սքանչելի մագաղաթյա Ավետարան, որ հայկական երկաթագիր գրչության և մանրանկարչության մի գլուխգործոց է: Գրքի մեջ նկարիչը պատկերել է մի կոմպոզիցիա՝ Գագիկը, իր կինը՝ Գարանդուխտ թագուհին և դուստրը՝ Մարիամը, միմյանց մոտ շարքով ծալապատիկ նստած: Ափսոս, որ մի բարբարոս ձեռք մկրատով կտրել է այդ պատկերի վերին կողմից մի շերտ, անհայտ թողնելով, թե այդ անձերի գլուխներին ինչ ձևի թագեր են եղել: Գագիկին թագադրել ենք, իսկ Գարանդուխտին և Մարիամին թողել գլխաբաց:

Կարսի Ավետարանի մասին ուսումնասիրական հոդված է տպագրել Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանը (Մեսրոպ եպիսկոպոս «Գագիկ թագավորի ավետարանը», «Արարատ», Էջմիածին, 1910, ապրիլ էջ 332-341): Այս արքայական ընտանիքի խմբանկարը (մանրանկար) առաջին անգամ հրատարակել է նույն հեղինակը (Մեսրոպ եպիսկոպոս, «Կարուց Գագիկ թագավորի մանրանկարը», «Արարատ», Էջմիածին, 1911, ապրիլ էջ 686), ապա տպագրվել է Փարիզում, 1929-ին (La Roseraie d' Armenie, T. III. Page choisies des meilleurs poetes... Trad. par Archag Tchobanian, Pariz, 1929): Ալրոմի մեջ Գագիկին, Գարանդուխտին և Մարիամին տեղավորել ենք առանձին-առանձին, կանգնած դիրքով, իսկ գույները տվել ենք ըստ Հացունու նկարագրության, քանի որ նա աչքի առաջ ունեցել է պատկերի գունավոր լուսանկարը, ստացած Եղիշե պատրիարք Դուրյանից:

**3-4. Չաքարե և Իվանե սպասալարները, XII-XIII դարեր:** Միջնադարյան Վրաստանի պետական-քաղաքական կյանքում շատ հայտնի են եղբայրներ Չաքարե և Իվանե Արդոթյանները, Երկայնաբազուկ (Մխաթրձելի) հայ իշխանները, իրենց սխրագործություններով և Թամար թագուհու օրերում երկրի ընդարձակման և հզորացման գործերով: Նույն իշխանները ոչ պակաս հայտնի են եղել նաև մեր ազգային պատմության մեջ իրենց վարչական և շինարարական գործունեությամբ, պատմիչների կողմից երբեմն կոչվելով «հայոց թագավոր»: Իրենց կողմից կառուցված Հառիճո վանքի (Շիրակ) արևելյան պատին քանդակված են Չաքարեն և Իվանեն ամբողջ հասակով՝ դեմ առ դեմ կանգնած և երկուսով բռնած եկեղեցու մանրակերտը: (Եկեղեցու մանրակերտը խիստ վնասված լինելով, անցյալ դարի 80-ական թվերին վանքի եղբայրությունը նրա տեղ հարմարեցրել է մի սրբապատկեր):

Մենք ձեռքի տակ ունենալով այդ խմբաքանդակի լուսանկարը (Թորոս Թորոմանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», Եր., Հ.Ա. 1942, էջ 371, նկ. 271)՝ այդ անձերին արձանալի նրությունից վերածել ենք կենդանի նկարչականի համապատասխան գույներ տալով:

## ՏԱԽՏԱԿ III

### ԹԱԳՈՒՀԻՆԵՐ, ԱՐՔԱՅԱԴՈՒՍՏՐԵՐ

1. Մաթենիկ, Արտաշես Ա-ի կինը, Ալանաց թագավորի դուստրը, II դար Ք.ա.

2. Աշխեն, Տրդատ Գ-ի կինը, Աշխադարի դուստրը, III-IV դարեր

3. Անծանոթ հայ թագուհի

4. Խոսրովդուխտ, «Օրիորդ հայոց», Խոսրով Ա-ի դուստրը, Տրդատ Գ-ի քույրը, III-IV դարեր

Այս պատկերներից 1-ինը, 2-րդը, 4-րդը պատմական հարազատություն չունեն։ Մի շարք պատմական այլ անձնավորությունների թվում այս անձերին էլ պատկերացրել են Վենետիկի Մխիթարյանները, անշուշտ իրենք պետք եղած տեղեկությունները տալով՝ նկարել և փորագրել են տվել իտալացի արվեստագետներին։ Հիշված փորագրությունները քանիցս տպագրվել են վենետիկյան հրատարակություններում։ Այդ նկարների վրա Oggioni ստորագրությունը մենք կարծում ենք փորագրիչի (քսիլոգրաֆ) արտատպումն է, իսկ մի քանիսի վրա երևացող տարբեր ստորագրությունները (Belaiife D. և այլն) ցույց են տալիս նկարիչների ազգանունները։ Այդ կիսանդրի-պատկերներն առնելով Ալիշանի «Հայաստամից» (Վենետիկ, 1901), վերածել ենք ամբողջական պատկերների և գույները տվել ըստ պատմական վկայությունների։ 3-րդ պատկերը, որին անվանել ենք Անծանոթ հայ թագուհի, առնված է մի կարկեհանից (կամես) 17մմ մեծությամբ, գտնվում է Փարիզի ազգային մատենադարանում։ Այս կարկեհանի գծանկարը իրենց աշխատությունների մեջ տպագրել են Կայլուսը (Caylus, "Recueil d' Antiquites egyp. etrus. grec. et rom", Paris 1752-64), Լանգլուան (Langlois V. "Numismatique de l' Armenie", Paris 1859) և Բաբելոնը (E. Babelon "La gravure en pieces fines, camees et intailles", Paris S-a):

Լայարդն այս քանդակը համարում է «Պատկեր մի հայ թագուհու»։ Լանգլուան հայտնում է, որ այդ թագուհին Տիգրան Դ-ի քույր և կին Երատոն է։ Ալիշանը իր «Այրարատում» այդ գծապատկերը քիչ տարբերությամբ տպագրել է երկու տեղ. առաջինը վերցնելով Կայլուսից, կոչել է «Հայ դշխո» (Հ.Ղ.Վ.Ս.Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 367) և երկրորդը՝ վերցնելով Լանգլուայից, անվանել է «Հայ թագուհի»։ Վ. Հացունին չբավարարվելով կարկեհանի այդ գծանկարով, իր գրքում («Պատմություն հին հայ տարագին», էջ 78) տպագրում է նրա լուսանկարը նմանահանությամբ, անձամբ ստացած լինելով Բաբելոնից։ Մենք այստեղ բերում ենք այդ լուսանկարը։ Այբոմի մեջ Անծանոթ թագուհուն տվել ենք նկարչական բնույթ և ամբողջ պատկերով համապատասխան գույներ։

## ՏԱԽՏԱԿ IV

### ԹԱԳՈՒՀԻՆԵՐ, ԱՐՔԱՅԱԴՈՒՍՏՐԵՐ

1. Մարիուն թագուհի, Կոստանդին Բ թագավորի մայրը, XIV դար

Երուսաղեմի հայոց վանքի մատենադարանի 1973 մագաղաթյա Ավետարանը, գրված 1392 թվին Ներսես գրչի կողմից և նկարազարդված Սարգիս Պիծակի մանրանկարչությամբ, նվիրաբերված է «Հեզահողի և ողորմած թագուհույն Հայոց Մարիամայ»։ Նկարիչը գրքի մեջ երկու տեղ պատկերել է այս թագուհուն, մեկը ծննդյան պատկերի մեջ, պարզ զգեստով՝ Հիսուս մանուկին լողացնելիս, մյուսը՝ Հիսուսին խաչից ցած բերելու տեսարանում շքեղ հագնված, թագը գլխին, ծնկաչոք աղոթելիս։

Մեսրոպ Եպսկ. Տեր-Մովսիսյանը իր «Հայկական մանրանկարներ» հոդվածում տվել է այդ պատկերներից առաջինը (տե՛ս «Ազգագրական հանդես» գիրք, XXIV, Թիֆլիս, 1913, էջ 80), իսկ Վ. Հացունին իր

երկի մեջ՝ երկրորդը, որից մենք օգտվել ենք՝ չորս Մարիամին կանգնեցնելով և գույներ տալով ըստ նկարագրության: («Պատմություն հին հայ տարագին», էջ 248):

**2. Կեռան կամ Կիո Աննա, թագուհի, Լևոն Բ-ի կինը, XIV դար:** Երուսաղեմի Հայոց վանքի մատենադարանում, թիվ 2563 մագաղաթյա մեծադիր Ավետարանը, գրված 1272թ. և նկարագարոված նշանավոր մանրանկարիչ Թորոս Ռոսլինի կողմից, վերջում ամբողջական էջի վրա ունի մի կոմպոզիցիա: Պատկերի վերին կեսում գահի վրա բազմած է Քրիստոսը, ձախ ծնկին դրած փառակազմ Ավետարան: Գահի աջ ու ձախ կողմերում կանգնած են Աստվածամայրն ու Հովհաննես Սկրտիչը դեպի Քրիստոս կոացած և աղայական դիրքով: Ներքևի մասում կանգնած են Լևոն Բ թագավորը, Կեռան թագուհին, ունենալով իրենց հետ դեպի վեր նայող հինգ զավակներին՝ չորսը և ձեռքերը աղոթողի դիրքով բռնած: Կեռանի պատկերը մենք վերցրել ենք այդ կոմպոզիցիայից, իսկ գույներ տվել ըստ Մ. եպսկ. Տեր-Մովսիսյանի («Հայկական մանրանկարներ», «Ազգագրական հանդես», գիրք XXIV, Թիֆլիս, 1913, էջ 78-80) և Հացունու նկարագրության («Պատմություն հին հայ տարագին», էջ 239, 253):

**3-4. Գարանդուխտ թագուհի և Մարիամ արքայադուստր. Կարսի թագավոր Գագիկ Բագրատունու կինը և դուստրը, XI դար**

## ՏԱԽՏԱԿ V

### ԱՐՔԱՅԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՉԱՎԱԿՆԵՐ

**1. Լևոն, Հեթում Ա-ի որդին և գահաժառանգը հետագայում Լևոն Բ թագավոր, XIII դար:** 1250-ական թվականներին Կիլիկիայում Հեթում Ա-ի թագավորության օրոք Կոստանդին կաթողիկոսը մի շքեղ Ավետարան է գրել տալիս և նվիրաբերում Հեթումի որդուն՝ իր սանիկ Լևոնին: Ավետարանը հարուստ կերպով զարդանկարել է Թորոս Ռոսլինը: Նկարիչը գրքի մի էջում պատկերել է պատանի Լևոնին ամբողջ հասակով: Նկարի ֆոնի վրա, վերևում, գլխատառերով գրել է. «ԼԵՎՈՆ ՈՐԴԻ ՀԵԹՈՒՄ ԹԱԳ»: Այս Ավետարանը երկար տարիներ գտնվում էր Նոր Նախիջևանի Լուսավորիչ եկեղեցում, ներկայումս տեղափոխված է Երևան, մատենադարան:

**2-6. Լևոն Բ-ի զավակները:** 2-ը մեծ որդին է, 3-4-ը՝ փոքր որդիները, 5-ը՝ Չաբել դուստրը և 6-ը՝ Ռիթան, XIII դար:

Վերցված են Երուսաղեմի Հայոց վանքի մատենադարանում գտնվող 2563 մագաղաթյա Ավետարանից. խմբանկար՝ Թորոս Ռոսլինի:

**7-8. Վասակ արքայադուստր որդիներ՝ Կոստանդինը և Հեթումը, XIII դար:**

## ՏԱԽՏԱԿ VI

### ՄԱՐԶՊԱՆՆԵՐ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐ, ԻՇԽԱՆՆԵՐ

**1. Վասակ Սյունի, նախարար և մարզպան, V դար:** Վասակին հնարավոր ճշտությամբ պատկերելու համար օգտագործելու ենք մեր պատմիչների և բանասերների տված տեղեկությունները: Նա եղել է մարմնով պարարտ, «թանձրամիտ», գլխին կապել է շավմա և նրա վրա ոսկե խույր (թագ): Մեջքին կապել է ոսկե մարգարտակուռ և ակնակուռ կամար, պարանոցին զգել ոսկե մանյակ (գունարտակ), ականջնե-

րին ոսկե զինդեր, ուսերին զցել սամույրե մուշտակ: (Տես Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին», Եր., 1957, էջ 136): Որովհետև Եղիշեն Վասակի պատմուճանի մասին չի հիշատակել, Հացունին այդ լրացրել է մի ուրիշ հայ մարզպանի՝ Սմբատ Բագրատունու (XIIդ.) պատմուճանի հիշատակությամբ, որ բերել է Սեբեոսից «Ի պատմուճանս բեհեզեայս ի յոսկոյ ամեալ...» («Պատմություն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլ», Կ. Պոլիս, 1851, էջ 104): Իսկ լայն ու ծալքավոր շավարի ձևը վերջինս կարծում է համանման Սասանյան շրջանի պարսիկ իշխանների շավարի ձևին (Վ.Հացունի, «Պատմություն հին հատարագին», էջ 98-99):

**2. Դավիթ Սահառունի, կյուրոպաղատ, VIIդ:** Սահառունի «Իշխան ամենայն աշխարհաց» («Պատմություն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլ», Կ. Պոլիս, 1851, էջ 162): Սա Մրենում իր կառուցած եկեղեցու արևմտյան ճակատին քանդակել է տվել իրեն իր կնոջ հետ միասին: Այդ քանդակապատկերից Դավթին առանձնացնելով, վերածել ենք նկարչականի, տվել համապատասխան գույներ:

**3-4. Սահակ և Համազասպ. Վասպուրականի իշխաններ, XIIIդ.:** Այս նահատակ եղբայրներն ամբողջ հասակով X դարում քանդակված են Աղթամարի եկեղեցու հարավային պատին, մենք դիրքերը թողնելով գրեթե նույնը, վերածել ենք նկարչականի և համապատասխան գունավորում տվել:

## ՏԱԽՏԱԿ VII

### ՍՊԱՐԱՊԵՏՆԵՐ, ԶՈՐԱՎԱՐՆԵՐ

Այս տախտակի վրա եղած չորս պատկերներն էլ պատմական նախատիպ չունեն, այլ ներկայացված են ավանդական պատկերացումներով:

**1. Մուշեղ Մամիկոնյան, IV դար:** Վենետիկի Մխիթարյանների պատվերով և ցուցումներով իտալական վարպետների գործ, տպագրված է մի քանի հրատարակությունների մեջ. կլիշեի վրա, ձախ կողմում, կարդացվում է փորագրողի անունը՝ Oggioni: Մուշեղի դիմանկարն ամբողջական չէ, մինչև մեջքից քիչ ցած. մենք ամբողջացրել ենք և տվել համապատասխան գույներ:

**2. Վարդան Մամիկոնյան, V դար:** Հանրաձանոթ այս դիմանկարն 1880-ական թվականներին Պետերբուրգում Կարապետ Եղյանի հանձնարարությամբ և ցուցումներով նկարել է մի ոռու նկարիչ, բնորդ ունենալով մի սիրունատես հայ ուսանողի: Ինչպես հայտնի է, նկարված է մինչև մեջքը. մենք լրացրել ենք ներքևի մասը՝ օրինակ ունենալով «Վարդանը ճակատամարտից առաջ» հայտնի փորագրությունը, որի մեջ սպարապետը կանգնած է Ղևոնդ երեցի հետ, երկրորդ պլանում ունենալով Եղիշեին: Համապատասխան գույները տրված են մեր կողմից:

**3. Ներսես Կամսարական, V դար:** Այս պատկերի վերին մասը վերցրել ենք մի հին փորագրության լուսանկարից, ըստ երևույթին «Ընտիր Հայկազունիք»-ից (Հ.Հովհ. Վ. Թորոսյան, «Ընտիր Հայկազունք», Գ.տպ., Վենետիկ, 1902, էջ 264): Հեղինակը Belaiife-ն է: Ներքևի մասը լրացրել ենք մենք և տվել համապատասխան գույներ:

**4. Գայլ Վահան, VI դար:** Պատկանում է Վենետիկի Մխիթարյաններին. փորագրություն, տպագրված մի քանի հրատարակությունների մեջ (Հ.Հովհ., Վ. Թորոսյան, «Ընտիր Հայկազունք», Գ.տպ., Վենետիկ, 1902, էջ 274, Համազասպ Թերճիմանյան, «Պատմություն Հայոց, Վենետիկ», 1880 և այլ հրատարակություններ, Ղ. Ալիշան, «Հայապատում», Վեն., 1901, էջ 211): Նկարի տակ կարդացվում են նկարչի Belaiife և փորագրչի՝ Oggioni անունները: Ներքևի մասի լրացումը և գունավորումը կատարված է մեր կողմից:

## ՏԱԽՏԱԿ VIII

### ԻՇԽԱՆՆԵՐ

**1. Պողոժ, Մեծ իշխան, XIII դար:** Ազգագրագետ Երվանդ Լալայանն իր «Վայոց ձոր» լուսանկարների այբոմում բերել է Սպիտակավոր Աստվածածին եկեղեցու արտաքին պատերին եղած քանդակապատկերները: Այդ պատկերների թվում եկեղեցու հյուսիսային պատին կա Պողոժ Մեծ իշխանի (1225-1284) բարձրաքանդակը՝ նստած՝ ձախ կողմում կանգնած ունենալով իր որդիներից մեկին (Ե.Լալայան, «Վայոց ձոր, Երևանյան նահանգի Շարուր-Դալարազյազի գավառի ոստիկանական շրջան»): Այբոմ, Թիֆլիս (անթվ.) Պողոժ իշխանի պատկերը տես 37-րդ տախտակի վրա): Մենք քանդակայինը վերածել ենք նկարչականի և հազուստներին տվել համապատասխան գույներ:

**2. Բուրբեյ, իշխան Օրբելյան, XIII դար:** Վերցրել ենք նույն Վայոց ձորի Սպիտակավոր Աստվածածին եկեղեցու սյուներից մեկի վրա գտնվող բարձրաքանդակ պատկերի լուսանկարից. քանդակը ներկայումս բերված է Երևան, պատմության պետական թանգարան: Մենք վերածել ենք նկարչականի, հազուստներին տալով պատշաճ գույներ:

**3. Խուրթու Բուդա իշխան, XIII դար:** Հաղպատի Ս. Նշան եկեղեցու գավթում, հարավային պատին մինչև այսօր մնում է այդ իշխանի որմնանկարը՝ կանգնած ամբողջ հասակով. նրա ձախ կողմում, ֆոնի վրա, գլխատառերով գրված է ՊԱՐՈՆ ԽՈՒԹԼՈՒԲՈՒՎԱ: Թե ո՞վ է եղել այդ անձնավորությունը, որ կամեցել է անմահանալ և ի՞նչ կապ է ունեցել Հաղպատի հետ, մենք չկարողացանք պարզել: Ակադեմիկոս Ն.Մառի հանձնարարությամբ նկարիչ Ս. Անդրիանովը 1912-ին նույնությամբ հանել է նկարի գունավոր պատճենը. այդ պատճենի լուսանկարը տպագրվել է «Христианский Восток»-ի նույն թվի էջ 350-ում, այնուհետև տպագրվել է Մառի «Անի» աշխատության մեջ: Մենք օգտագործել ենք այդ նկարը:

**4. Վասակ, իշխան Լամբրոնի, արքանդրայր, XIII դար:** Երուսաղեմի հայոց վանքի Մատենադարանում, թիվ 2568 մագաղաթյա Ավետարանը, որ գրված է Կիլիկիայում նկարագարողված մի տաղանդավոր մանրանկարչի կողմից (Ռ-ոսլի՞ն) 1250-72 թվականներին, ունի ստացողի՝ Լամբրոնի Վասակ իշխանի (Հեթում Ա-ի եղբոր) պատկերը՝ հետևյալ կոմպոզիցիայի մեջ. Քրիստոսը նստած է վերևում մի գմբեթածածկ գահի վրա: Նրա աջ կողմում ծնկաչոք և կարկառուն ձեռքերով Վասակն է՝ իր Կոստանդին և Հեթում երկու փոքր որդիների հետ, հայացքներն ուղղված դեպի Քրիստոսը: Ետևում կանգնած է Տիրամայրը և բարեխոսում է նրանց համար: Այդ պատկերը միագույն տպագրվել է Հացունու «Պատմություն հին հայ տարագին» գրքի մեջ (էջ 255): Ներկա այբոմի մեջ օգտվելով նույն կոմպոզիցիայից մենք առանձնացրել ենք Վասակին, կանգնեցրել և հազուստներին գույներ տվել ըստ ականատեսի վկայության: (Որդիների դիմանկարները տես տախտակ VII, նկ.7-8):

## ՏԱԽՏԱԿ IX

### ՉԻԱՎՈՐ ԻՇԽԱՆՆԵՐ

**1-2. Մի անծանոթ իշխան և իր թիկնապահը, XIV-XV դարեր:** Վերցված է Ջուղայի հայոց գերեզմանատանը գտնվող մի տապանաքարի բարձրաքանդակից, մշակված է և գույներ տված:

**3. Ամիրհասան Բ, XIV դար:** Վայոց ձորի Խաղբակյան կամ Պողոժյան տոհմի իշխան, որսի տեսարանում, Սպիտակավոր Աստվածածին եկեղեցու քանդակներից: Այդ բարձրաքանդակ պատկերը ներկայումս բերված է Հայաստանի պատմության պետական թանգարան:

**1. Նիզակավոր, I դար, Ք.ա., մինչև ուշ միջնադար:** H.Grouber-ը իր «Roman Medallions» աշխատության մեջ (Լոնդոն, 1874, տախտակ 66, թ 20, տախ. 119, թ. 7-8՝ ըստ Հացունու 88-րդ էջի 2-րդ ծանոթության) բերել է հռոմեական եռապետներից մեկի՝ Օկտավիոս Փլաբիոսի և Օկտավիանոս Օգոստոս կայսեր անուններով Բրիտանական թանգարանում գտնվող դրամների և մեդալիոնների օրինակները: Սրանցից մեկի վրա կա Արմենիա ներկայացնող այս զինվորի նկարը: Մենք կարծում ենք, որ սա սիմվոլիկ պատկեր է քանզի նիզակավորը չէր կարող միևնույն ժամանակ նետածիզ լինել: Մենք վերցրել ենք Վ.Հացունու գրքից («Պատմություն հին հայ տարագին», էջ 88, նկ.40):

**2. Աղեղնավոր կամ նետածիզ, հին և միջին դարեր:** Հետևակ աղեղնավոր կամ նետածիզ զինվորի նետ ու աղեղը այս ձևով և մեծությամբ կարելի է տեսնել թե հին դարերում (ինչպես I-ին պատկերում) և թե միջնադարում՝ ինչպես Պտղոմի եկեղեցու վրա եղած Ամատունի Մանուել իշխանի (VII դար), այնպես էլ XIV դարում Ամիրհասանի ձեռքում (տես տախտակ XI): Եղել են և լայնալիճ աղեղներ գրահավոր և առաջընթաց մարտիկների ձեռքում:

**3. Վաղրավոր, IV-V դարեր:** Վաղրը հաստ, ծանր գլխով երկաթե մահակ է (գուրգ, սոփա), որ հետևակ զինվորների որոշ խմբեր գործ են անել թշնամուն երես առ երես հանդիպելիս: Միջին դարերի վաղրը ավելի փոքր է. բռնել են մի ձեռքով՝ խփել հակառակորդի գլխին:

**4. Պարսավոր, հնագույն դարեր:** Պարսավոր զինվորների մասին մեր պատմագրության մեջ հիշատակություն ունի միայն Խորենացին. խոսելով Տիգրան Երվանդյանի մարտիկների մասին, նա ասում է. «Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողներն՝ հաջող աղեղնավորներ, կռպալներով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով. մերկերը (նրանք, որ գրահներ, վահան կամ ուրիշ պահպանակ չէին կրում՝ ծան. Ստ.Մայխասյանցի) պատսպարվեցին վահաններով և երկաթե զգեստներով» (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1940, էջ 46):

**5. Սակրավոր, Հին և միջին դարեր:** Թշնամու որևէ ամբողջություն կամ շինվածք քանդելու պարտականություն ունեցող զինվոր, ձեռքերում բռնած սակր (կացին, տապար):

**6-7. Սուփնավորներ:** Հին դարերում սուփն կամ սուփն կոչվել է տեգի կամ նիզակի այն տեսակը, որ գլխին ամրացված է ունեցել ճանկ ունեցող տապարածև երկաթներ, որոնցով հարվածելուց բացի ձգելով վայր էին զցում հեծյալներին: Թորատում XVI դարում գրված և նկարագարողված մի Ավետարանի մեջ մանրանկարների թվում Բրիտանիան ձեռքակալող զինվորները հագնված են հայ գեղջուկի պես և ձեռքերին բռնել սուփնավոր նիզակներ (La Roseaie d' Armenie, T. 2, Trad. par Archag Tchobanian, Paris, 1923, էջ 74):

**8. Սուսերավորներ, I դարից:** Վենետիկի Ս. Մարկոսի փառահեղ տաճարի արտաքին պատերի հարավարևմտյան կողմի անկյունում հազգված կա մի խոշոր պատկերաքանդակ, որ ներկայացնում է չորս սուսերավոր զինվորներ, գույգերով կանգնած: Ալիշանի ասելով այդ պատկերները հայ բարձրաստիճան զինվորականներ են, որ գործելիս են եղել հավանորեն Հռոմում՝ որպես Տրդատ Ա-ի թիկնապահներ (65թ.): Մենք լուսանկարից վերցրել ենք այդ պատկերներից մեկը՝ նկարչականի վերածելով:

**9. Զրահավոր կամ շերտավոր, X դար:** Աղթամարի Ս. Խաչ վանքի արտաքին պատերի քանդակների մեջ հարավային կողմում եղած պատկերաքանդակը, որ ներկայացնում է Գողիաթին, հազգված ու զինված է քանդակագործին ժամանակակից և ծանոթ կերպով՝ գրահ հագած և վահանով. այդ պատկերաքանդակը մեր կողմից վերածված է նկարչականի և համապատասխան գույներ տրված: Նույնը միագույն տպագրությամբ ունի Հացունին («Պատմություն հին հայ տարագին», էջ 209):

**10. Չիավոր ասպետ, XII-XIII դարեր:** Ալիշանն իր «Սիսուան»-ի (Վենետիկ, 1885) 466-487 էջերի ներդիրներում ցուցադրել է այս ձիավոր ասպետի գունավոր նմանահանությունը, անվանելով «Չիավոր հայ



ի թագավորության Սիսուան», ըստ սովորության մեծանուն բանասերն իր բուն աղբյուրը չի նշում, այլ հիշում է XIV դարում գրված մի թարգմանական ձեռագիր, որի մեջ խոսվում է խաչակիրների ժամանակ Կիլիկիայում հայ ձիավոր ասպետների մասին:

*Ծանոթ.* - 1, 3, 5, 3, 7-րդ զինվորների մասին անուն առ անուն նշում է Փավստոսը իր պատմության մեջ (Դ.ԺԵ), Արշակ Բ-ի բանակում, IV դար

2, 3, 4, 5-րդ նկարները կազմելիս օգտվել ենք հին հռոմեական զինվորների փորագրություններից (ՕՐՈՎՈՅՈՒՄ ԴՐՎՈՒՄ ԴՐՎՈՒՄ ԴՐՎՈՒՄ, սոց. Դինդրելի Բարձոնի, ր. Ս.ՍԵ. II 1795):

## ՏԱԽՏԱԿ XI ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

**1. Գատավոր, XIV դար:** Վենետիկի Մխիթարյանների գրադարանի N 107 «Անսիզը Անտիոքա» 1331թ. ձեռագրի «Լևոն Գ թագավորի դատարանը» նկարից. գործ Սարգիս Պիժակի:

**2. Գատապաշտպան, XIV դար:** Առնված է նույն ձեռագրի նույն նկարից:

**3. Դիվանապետ, XIII դար:** Կիլիկիայի Սիսու քաղաքում 1283 թվին ընտիր մագաղաթի վրա գրված մի Սաղմոսարանի մանրանկարից: Այդ մանրանկարի մեջ պատկերված է պարոն Հովհաննես (Հանես) Ջանալերը (դիվանապետը - պետական քարտուղար), հավանորեն գրիչը Աստվածածնի գահի աջ կողմում, ծնկաչոք աղոթելիս: (Հայկազ Հապեշյան, «Սաղմոսարան գրված Լևոն Գ թագավորի համար», Վիեննա, 1922թ.): Մանրանկարն ամբողջությամբ, բայց միագույն տպագրված է նաև Հացունու «Պատմություն հին հայ տարագին» աշխատության մեջ (էջ259): Դիվանապետին մենք տվել ենք կանգնած դիրք և զգեստը գունավորել ենք:

**4. Դահիճ, X դար:** X դարի վերջերում Բյուզանդիայի Վասիլ Բ կայսեր համար գրված պատկերազարդ Հայսմավորքից (Վատիկան): Պատկերը ներկայացնում է **Հովհաննեսի նահատակությունը**: Ալիշանը գունավոր նմանահանությամբ տպագրել է այդ պատկերը, որից մենք վերցրել ենք միայն դահիճի պատկերը (տե՛ս «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 236-237):

**5-6. Քուրմեր.** Նախաքրիստոնեական պաշտամունքի այս սպասավորների նկարները դրված են այս էջում տեխնիկական նկատառումով: Առաջին քուրմը վերցված է Իսավերդյանի մի պատկերազարդ աշխատությունից՝ «Անուշավան կնվիրվի Արմավիրի սոսիներին» պատկերից (Le R.P. Dr. Jacques Issaverdens, Histoire de l' Arménie (Album) Venise, S. Lazare, 1888, 16-րդ էջի տախտակ), Բ քուրմը՝ Հին Բայազետի բերդի բարձրաքանդակ պատկերից (Ալիշան. «Այրարատ» էջ504): Վերջինս գուցե և պատկանում է ուրարտական դարաշրջանին:

**7-9. Քաղաքապահներ.** 7-8 պատկերներն վերցրել ենք մեզ մոտ եղած մի մանրանկարչական պատանդիկից (դարը անհայտ), 9-րդը՝ Քանաքեռի եկեղեցու հին վարագույրի նկարներից:

## ՏԱԽՏԱԿ XII

### ԲԱՐՉՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

**1-2. Սուրխաքմիչ և Բեկիխաթուն, XIV դար:** Երևանի մատենադարանի N6230 ձեռագիր Ավետարանը, որ 1358 թվին նկարազարդել է մանրանկարիչ Ավագը, 410-րդ թերթում Քրիստոսի ծնունդը պատկերի վրա ստորին աջ անկյունում, ունի գրքի ստացող պարոն Սուրխաքմիչի և կնոջ Բեկիխաթունի դիմանկարները միասին ձևկաչոք աղոթելիս: Այս նկարը միագույն տպագրված է Սվիրինի աշխատության մեջ (տես *А.Н.Свяряв, Миниатюра Древней Армении, М-Л, 1939, էջ 99*):

**3-4. Պարոն Բռնավոր և Տղա տիկին, XIII դար:** Վ. Հացունին իր աշխատության մեջ («Պատմություն հին հայ տարագին», էջ 218-219) տպագրել է մի մարդու և կնոջ ու կոչել «Պարոն Բռնավոր և Տղա տիկին»: Այդ անձնավորությունները՝ որպես ստացողներ «Նոր Ջուղայի 1236-ի Ավետարանի» (նվիրված «Խժկունից ուխտին ի Շիրակ»), չոքել են դեմ առ դեմ, ձեռքերը բռնած աղոթողի դիրքով, երկուսի մեջտեղում, մի բարձրության վրա դրված՝ ունենալով իրենց գրել տված Ավետարանը: Մենք օգտվել ենք այդ նկարից չոքած պատկերները կանգնեցնելով և գույներ տալով: Հացունին այդ նկարը «շնորհիվ պր. Մելիք-Հակոբյանի» ստացել է, ըստ երևույթին, Իրանից:

**5. Անեցի տիկին, XII-XIII դարեր:** Ակադեմիկոս Ն.Մառի Անիում կատարած պեղումներից դուրս եկած խեցեղեն ամանների թվում մասնագետների առանձին ուշադրությունը գրավել է մի ճենապակե պնակ, որի մեջ նկարված է մի երիտասարդ կնոջ պատկեր: Այդ պնակը ներկայումս գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում: Արմֆանի 1942թ N3-4-ի «Տեղեկագրում» մասնագետ Բ. Շելկովիկովը միջնադարյան Հայաստանի խեցեղենի մասին խոսելիս մեծ գովեստով է հիշատակում այդ պնակը իր նկարի հետ միասին: Մեր ալբոմի մեջ այդ նկարը բերում ենք որոշ վերամշակմամբ:

**6. Մի ազնվական տիկին, XIV դար:** Վերցված է Երևանի մատենադարանի N 2627/359 ձեռագիր Աստվածաշնչից, գրված XIV դարում: Կինը բնագրում աղոթողի կամ թողություն խնդրողի դիրքում է:

**7. Թամամխաթուն, XIV դար:** Տայքի Շերբակ գյուղում 1313 թվին գրված և զարդանկարված մի Ավետարանի ստացողները եղել են ոճն Հազարչան և իր կինը՝ Թամամխաթուն: Նկարիչը Թամամին նկարել է Աստվածածնի պատկերի առաջ, ձեռքերը պարզած: Վերևում կանգնած է Մարիամ Մագթաղենացին: Այդ նկարը միագույն տպագրված է Արշակ Չոպանյանի մի աշխատության մեջ (*La Roseraie d' Armenie. T.3, Trad. par A. Tchobanian, Paris, 1929, էջ 19*): Թամամին մենք տվել ենք համապատասխան գույներ:

**8. Տիկին Սահառունի, VII դար:** Վերցված է Մրենի եկեղեցու քանդակապատկերից:

**9. Անծանոթ իշխան, VI-VII դարեր:** Վերցված է Թալինի գերեզմանատանը գտնվող վաղ քրիստոնեական շրջանի մի կոթողի քանդակապատկերից, որի վերևում կանգնած է Քրիստոսը, իսկ ներքևում այս անծանոթը՝ խոզի գլխով, վառած մոմը ձեռքին: Այդ կոթողի բեկորը բերված է Հայաստանի պատմության պետական թանգարան: Մենք վերցրել ենք Թ. Թորամանյանի լուսանկարից: («Գեղարվեստ», Թիֆլիս. 1917, N6, էջ 80): Գլուխը փոխել ենք մարդկայինի և հագուստին գույներ տվել:

**10. Հարուստ տիկին, XIV դար:** Կիլիկիայում 1322 թվին գրված և Սարգիս Պիժակի նկարազարդած մի Ավետարանի 61-րդ թերթի վրա կա մի կոմպոզիցիոն նկար՝ հարսանեկան տեսարան, որից մենք վերցրել ենք աջ կողմում հանդիսավոր նստած տիկնոջը, տալով կանգնած դիրք (տես *А.Н.Свяряв, Мниатюра Древней Армении, М-Л, 1939, էջ 77*):

## ՏԱԽՏԱԿ XIII.

### ՄԻՋԻՆ ԵՎ ԱՏՈՐԻՆ ԳԱՍԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

**1-2. Հոհան ճարտարապետ և կառուցող բանվոր, VII դար:** Չվարթնոց եկեղեցին, արտաքին կողմից առաջին հարկի 32 գույգ որմնասյուներից վերև, պատված է եղել նոներից, խաղողի ողկույզներից ու տերևներից քանդակված մի գոտիով: Այդ գոտու տակ որմնակամարների անկյուններում տեղավորված են եղել մարդկանց բարձրաքանդակներ, իրենց ձեռքերում ունենալով շինարարական գործիքներ: Կործանումից և կորստից ազատվել են այդ պատկերներից միայն մի քանիսը. նրանցից մեկը, որ ավելի մեծ է և կանգնած է ավելի հանդիսավոր, վերևում ունի Յոհան գրությունը: Այս բանի վրա առաջին անգամ մենք ուշադրություն դարձնելով կարծիք հայտնեցինք, որ Յոհանը կարող է լինել և եկեղեցու ճարտարապետը, իսկ մյուս պատկերները՝ նրա վարպետները՝ կառուցող բանվորները: (Ավելի մանրամասն տես Գ.Լևոնյան, «Նոր կարծիքներ Չվարթնոցի մասին», տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի, N1, Երևան, 1926): Մեր այդ կարծիքը ընդունելություն գտավ և հետագայում արդեն ամեն տեղ Հոհանը հիշատակվում է որպես Չվարթնոցի ճարտարապետ: Այբոմի մեջ մենք Հոհանին և իր բանվորներից մեկի քանդակ պատկերները վերածել ենք նկարչականի, լրացնելով նաև նրանց ներքևի մասերը, ինչ որ չկա իրականում:

**3. Գրիգորիս:** Այս պատկերը մանրանկարչությունից առնելով իր «Պատմություն հին հայ տարազին» աշխատության մեջ (էջ 221) բերել է Հացունին, չիհշատակելով ոչ աղբյուրը և ոչ նկարի որ դարին պատկանելը: Գրիգորիսը և իր կինը՝ Մամախաթուն, միջին դասի մարդիկ, որ նկարված են ծնկաչոք, ձեռքերը աղոթողի դիրքով, ըստ երևույթին որևէ ձեռագրի ստացողներն են ու նրանց պատկերները նկարիչը տեղավորել է իր նկարազարդած գրքի մեջ: Իզուր Հացունին Գրիգորիսին դասել է ռամիկների կարգը:

**4. Այրի կին:** Վ. Հացունին իր «Պատմություն հին հայ տարազին» աշխատության մեջ տպագրելով այս կնոջ մանրանկարչական պատկերը (միագույն) դարձյալ չի նշում, թե որ դարում է գրված ու նկարազարդված այն ձեռագիր Ավետարանը, որից վերցրել է ինքը:

**5. «Իմաստուն կույս» պատկեր, XVII դար:** Այս նկարը գտնվում է Փարիզում, Տ. Քելեկյանին պատկանող ձեռագրերի թվում եղող 1667-ին գրված մի շարականի մեջ, լուսանցքի վրա, որպես «Իմաստուն կույս» միագույն տպագրված է Արշակ Չոպանյանի ժողովածուի Բ գրքում (էջ 246), որից մենք վերցրել ենք և գույներ տվել (*La Roseraie d' Armenie. T.3, Trad. par A. Tchobanian, Paris, 1923*):

**6. Հանցավոր կին, XIX դար:** Վենետիկի Մյսիթարյան մատենադարանում գտնվող «Անսիզք Անտիոքա»-ի 1331 թվին գրված մի օրինակում, որ նկարազարդել է Սարգիս Պիծակը, մի ամբողջական էջի վրա պատկերել է Լևոն Գ-ի դատարանը: Այդ կոմպոզիցիոն նկարի մեջ հանցավոր կինը ծնկաչոք դիրքով կեցած է դատավորների դիմաց: Ալիշանը իր «Սիսուանի» մեջ գունավոր պատճենով տպագրել է այդ նկարը, որից վերցնելով՝ մենք կնոջ դիրքը փոխել ենք, զգեստն ու գույները թողել անփոփոխ (տես «Սիսուանի», էջ481):

**7-8. Մատուլակ և ձկնորս, XIII դար:** Երևանի մատենադարանում N 7823 ձեռագիր մեծադիր Ավետարանը, որ գրված է Հադայատում 1211 թվին և նկարազարդված մանրանկարիչ Մարգարի կողմից, տեքստից առաջ, իր 42-43 էջերի վրա նկարված խորանին կից ունի մարդկային երկու պատկեր, բավական հետաքրքրական տարազներով: Նրանցից մեկին մենք պայմանական անվանում ենք Մատուլակ, մյուսին՝ Ձկնորս: Վերջին պատկերի կողքին կա այսպիսի գրություն. «Շերանիկ, քանի գաս, ձուկն բեր»: Ա.Ն. Սվիրինը հայ մանրանկարչությանը նվիրված մի արժեքավոր աշխատության մեջ խոսելով Հադայատի Ավետարանի մանրանկարների մասին՝ զեռտեղել է Մատուլակի և Ձկնորսի նկարները (միագույն), և կարծում է, որ Շերանիկին ուղղված խոսքը այլաբանական նշանակություն ունի (տես Ա.Н.Свирин, *Миниатюра Древней Армении, М-Л, 1939, էջ 86*): Մատուլակ անվանվածը ունևոր ընտանիքի երիտասարդ է, որն իր

ձեռքում ունենալով երեսարբիչ, պատրաստվում է ջուր ածել լվացվել ցանկացող տիրոջ կամ հյուրի ձեռքերին: Ե.Խ.:

**9. Ծերուկ, XIII դար:** Նույն ձեռագիր Ավետարանի մեջ կա մի ամբողջական պատկեր, որ ներկայացնում է Քրիստոսի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ: Այդ նկարի ձախ կողմում եկեղեցու պատի տակ նկարիչը կանգնեցրել է իր ժամանակակից այս ծերուկին՝ մի ձիթենու ճյուղ բռնած:

**10-11. Տղաներ, XIV և XVII դարեր:** Երուսաղեմի հայոց վանքի մատենադարանում գտնվող ձեռագիր ճաշոցը՝ գրված Դրիմի Սուրխաթ քաղաքում 1350 թվին և փատավոր նկարազարդված մանրանկարիչ Առաքելի կողմից, իր էջերից մեկի վրա, լուսանցքում ունի մի տղայի նկար, որը միագույն պատկերված է Արշակ Չոպանյանի աշխատության մեջ (*La Roseraie d' Armenie. T.3, Trad. par A. Tchobanian, Paris, 1923, էջ 111*) և կոչված է «Հովիվ» (նկ. 11): Մյուս տղան (նկ. 10), որ պատկանում է XVII դարին, վերցրել ենք Հացունու գրքից (էջ 371):

**12-14. Ժողովրդական տիպեր, XIV դար:** Երևանի մատենադարանում գտնվող մի մագաղաթյա ընտիր ձեռագիր Աստվածաշունչ՝ գրված և նկարազարդված Կիլիկիայում 1320թ. սկզբում անձանոթ «հոգեհանձար նկարակերտի» ձեռքով, ապա լրացրած Սարգիս Պիծակի կողմից 1322թ., իր 138-րդ թերթի վրա ունի մի խմբանկար, որ ներկայացնում է իր ժամանակի «ժողովուրդը»: Ա.Ն. Սվիրինը իր աշխատության մեջ միագույն ներկայացրել է այդ խմբանկարը: Մենք օգտվել ենք վերջինից. գույները տրված են մեր կողմից (տե՛ս Свирин, նշված աշխատությունը, 1939):

## ՏԱԽՏԱԿ XIV

### ՇԻՆԱԿԱՆՆԵՐ, ՌԱՄԻԿՆԵՐ

